

Городской биб

Университетский

1914

35
11-13



06 JUN 2006

XVI
1

19 NOV 2010

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ. ՏԿԱԳՐՈՒԹԵԱՆ

400

Հ
ՏԱՐԵՐԻ ԳԻԼԵՐ

1500

ՀՕՔԵԼԵԱՆԻ
ՀՐԵԱՏԱԿԻՆ

№ 9

հրատ. Բ.Ա. Բուդուշանի.

ԶՈՐԱՊԵՏԾ

ՏԵՄՊԵՏԱՆ



85
0-13

~~85~~
~~5-13~~

Ա 8 թ 9.

ՀՐԱՏ. ԲՓ. Ը. ԲՈՒԺՈՒՊԵՍՆԻ


թ 9.

2016

ԶՈՐԱՊԵՏՏ ՏԵՄՊԵՏԱՆ

(Խաչի եւ կխալուսնի կրիւք)

1403



1. Պաշտրւած ֆամագոստան. 2. Ահեղ ճակատամարտ.
3. Վերջին յարձակումը. 4. Մուլէյ-էլ'-կաղել. 5.
Քէպի ամրոց. 6. Անհաւասար կոփւ. 7. Ազատութիւն.
8. Ազնիւ. հայրենասէբ իտալուհին.

Հ Թ Ի Փ Լ Ի Ս
Տաղարան «Հերմէս», Գրաֆսկայա փող. № 6
1914

8199

ԶՈՐԱՊԵՏ ՏԵՄՊԵՍՏԱՆ

ՊԱՇԱՐԻԱԾ ՖԱՄԱԳՈՒՏԱՆ

1570 թւականը մի ծանր տարի էր Վենետիկի հանրապետութեան համար. ամեն կողմից թշնամին պաշարել էր նրան, վերջին ժամանակները նոյն իսկ սուրբ Մարկոսի առիւծի մոնչիւնը սկսել էր մեղմանալ:

Լայնածաւալ Տաճկաց պետութեան ինքնակալ Սելիմ II-դը, չբաւականանալով Միջերկրական ծովի ծովափնեայ երկրներով, զօրքերը առաջ էր մղել դէպի Կիպրոս կղզին՝ *) յագուրդ տալու իր տիրապետական տենչերին:

Նրա յաղթական սրին, առանց զօրեղ գիմալրութեան, ենթարկւել էին Կիպրոս կղզու չորս քաղաքները: Եւ այժմ նրա զօրքերը պաշարել էին նրանցից վերջինը՝ ֆամագոստան, որը չետելով միւսների օրինակին, պաշտպանութեան օրհնասական ճիգեր էր թափում:

*) Կիպրոս կղզին գտնւում է Միջերկրական ծովի հիւսիսարևելեան մասում, յաջորդաբար նրան տիրել են՝ Հռոմէական կայսրները, իսահակ կաթոնը, հայկական՝ Լուսինեան առնձը, Վենետիկը և ապա 1571 թւից—տաճիկները:

Անկման օրը մօտենում էր. բերդի լայն ու հաստ պարիսպները, չը դիմանալով մեծ վեզիր Մուստաֆա փաշայի զօրքերի խիզախ յարձակումներին, տեղ անեղ փուլ էին եկել, քանդւել։ Պաշարւած քաղաքում մթերքների սաստիկ կարեք էր զգացւում։ Արդէն վաղուց մոռացել էին սովորական կերակուրները, ուտում էին ինչ Աստւած տալիս էր՝ ձիու, շան, կատուի կամ որևէ կենդանու միս, զրկւած լենելով գոնեա չոր հացի կտորից։

Բայց չընայած դրան, ամեն տեղ անսովոր ոգեսրութիւն էր տիրում։ Պաշտպանւողները որոշել էին մինչեւ արեան վերջին կաթիլը կուել, հարւածել, հարւած առնել ու ապա սուրը ձեռին մեռնել։ Ամենքը ուզում էին իրանց կեանքը ըստ կարելոյն շատ թանգ ծախել...

Այս վերջին օրերս յարձակումները մի քիչ մեղմացել էին, թնդանօթների որոտն էլ լուսում էր երբեմնակի միայն։ Մի խորհրդաւոր խաղաղութիւն էր տիրում։ սակայն, այդ ահաւոր լուսութեան մէջ, մօտակայ փոթորկի սարսափն էր զգացւում։

Մի տխուր ու ծանր գիշեր էր։ Լայն ու արձակ վրանի տակ, սեղանի չորս բոլորը հաւաքւել էին մի քանի մարտիկներ։ Ճրագը աղօտ էր սփոռում, չը կարողանալով փարատել շըրջապատող մթութիւնը։

— Վեց։

— Հինգ։

— Տասնեմէկ։

— Զհրու։

— Ա՛յս, դուք անիծեալներ, տաճկական ուրբերը թող ձեր զլիխն թափւեն. բախտը ձեզ ժըպտում է, սինիօր Պերպինիանօ, դուք, կարելի է ասել, մի սատանայական բաղդ ունիք, երէկ ինձանից մօտ 80 ցեխին տարաք, այսօր նոյնքան... չէ, շնորհակալ եմ, բաւական է... հետաքրքիր է, երբ տաճիկները քաղաքը առնեն, ինձանից կաշուիցս բացի ի՞նչ պիտի տանեն...

— Հանգիստ եղէք, զօրապետ Լաշչինսկի, այդ նրանց երբէք չի յաջողուի։

— Դուք կարծում էք, սինիօր Պերպինիանօ։

— Ոչ միայն կարծում եմ, այլ նոյն իսկ համոզւած եմ։ Այն օրւանից, երբ սլաւոն զինուրները միացան մեզ հետ, մենք անյաղթելի դարձանք։ Վենետիկը գիտէ իր համար մարտիկներ ջոկել։

Թնդանօթների ահոելի որոտը ընդհատեց նրանց խօսակցութիւնը։ Այդ ըոպէին ներս վազելով մի երիտասարդ ասլետ, դիմեց ներկաներին։

— Շատ լաւ, դուք այստեղ ուրախ ժամանակ էք անցկացնում, իսկ տաճիկները արդէն պաշարել են սուրբ Մարկոսի բաստիոնը և ամեն ըոպէ սպառնում են ներս խուժելու։ Իսկ դուք այստեղ հանգիստ նստած խաղում ու զուարձանում էք...

— Ա՛հ, զօրապետ Տեմպեստա, ծաղրալի

հայեացքով դիմաւորեց նրան Լաշչինսկին։ Միայն դուք բաւական էք թշնամու դէմ, իսկ մեր խաղը մի խանգարէք, չէ՞ որ դուք քաջ և ամենքից հըռչակուած զօրապետ Տեմպեստան^{*)} էք. կարող եմ ասել, սա վերջին ազատ գիշերը չէ Թամագուտայի համար։

Եկող ասպետը արագութեամբ ձեռը մեկնեց դէպի թուրը։

Նա վերին աստիճանի գեղեցկադէմ պատանի էր, և զինւորի անհամապատասխան քնքշութիւն ունէր։ Միջահասակ, գեղեցիկ ու լաւ կազմւածքով, փայլուն ու սեաչեայ, թաւշանման փափուկ մազերով, կարմիր շրթունքներով։ Նա աւելի շուտ, զգեստը փոխած օրիորդի տպաւորութիւն էր թողնում, քան թէ զինւորի։

Նրա շորը միւսներից աւելի շքեղ ու կոկեկ էր, աչքի էր ընկնում իր գեղեցկութեամբ։ Զրահակիր կրծքի վրայ փայլում էին դքսութեան շքանշանները՝ մի թագ ու երեք աստղեր։ Նրա կողքից կախւած էր մի կեռ ու թանկագին սուր, որի նմանը սովորաբար բանեցնում էին ֆրանսիական ազնւականները։

— Զօրապետ Լաշչինսկի, ինչ էր ուզում դուք դրանով ասել, մեղմ ու դուրեկան ձայնով հարցրեց երիտասարդ ասպետը։

— Ես ուզում եմ ասել, որ մենք այնքան ուժեղ ենք, որ տաճիկները պիտի մեզանից վախենան, և ոչ թէ մենք նրանցից։ մենք մեր զօր-

^{*)}Տեմպեստա իտալերէն նշանակում է փոթորիկ։

քերով նոյն իսկ կարող ենք մինչև Պոլիս, կամ նոյն իսկ նզոված արաբական անապատները քըշել նրանց։

— Դուք խօսքը փոխեցիք, ձեր ասածը ինձ էր վերաբերում և ոչ թէ տաճիկներին։

— Զեղ էր վերաբերում թէ տաճիկներին՝ ինձ համար բոլորը մէկ է, փնթփնթաց լեհը։

— Զօրապետ, այդ խօսքերի համար դուք ինձ բաւարարութիւն պէտք է տաք։

— Ուրախութեամբ. թէպէտ դուք մեծ անուն էք կրում, բայց գեռ երեխայ էք, այն, երեխայ էք... բացի դրանից ես այլ դիտողութիւններ ունիմ՝ դուք տղամարդ չէք, այլ...

Կրկին երիտասարդի աչքերը փայլեցին ու նա գունատեց։

— Պարհն, դուք մոռանում էք, որ ես դքսական տոհմից եմ, իսկ դուք մի բախտախնդիր անձնաւորութիւն էք։ Սակայն, — զսպելով իրան, շարունակեց նա հանգիստ, — դուք, ինչպէս տեսնում եմ, հաւատ չէք ընծայում իմ քաջութեանը. լաւ ուրեմն, կը փորձենք։ Դուք անշուշտ նկատած կը լինէք, որ ամեն օր տաճկաց բանակից դուրս է գալիս մի ձիաւոր և հրաւիրում է մեզ մենամարտութեան։ հենց վաղը երբ նա նորից դուրս գայ, ես և դուք ընդունենք նրա հրաւէրը և գործով ցոյց տանք, թէ ով է մեզանից աւելի հմուտ զինւորը։

— Ուրախութեամբ, զօրապետ, ուրախութեամբ, և որովհետեւ ես հասակով ձեզանից աւե-

վի մեծ եմ, ուստի ես առաջինը կը մենամարտեմ նրա հետ, և այդպիսով ձեզ կազատեմ նրա սրի հարւածներից:

— Ո՞չ, թող վիճակը որոշէ, թէ մեզանից առաջինը ով պիտի դուրս գայ: Ուրեմն մինչև վաղը, զօրապետ Լաշչինսկի:

Վերջացնելով այս խօսակցութիւնը, երիտասարդը արագ քայլերով դուրս գնաց վրանից ու շտապեց դէպի սուրբ Մարկոսի բաստիոնը, ուր թնդանօթները իրանց որոտով մահ էին սփռում:

Յանկարծ խաւարի միջից նրան մօտեցաւ մի բարձրահասակ մարդ:

— Զը վախենաս, տիրուհի, ես եմ:

— Դու ես, էլ-կադուր:

— Այս, տիրուհի:

— Քանի անգամ եմ քեզ ասել, որ ինձ այդ-չանւանես, չէ որ կարող են լսել:

— Ներողութիւն, զօրապետ:

— Ի՞նչ կարևոր լուր ես բերել. գնանք մի թաքուն տեղ, այնտեղ կը պատմես:

Նրանք մտան մօտակայ ամրոցի տակ կառուցած բուրգը, Այժմ, ճրագի լոյսի օգնութեամբ կարելի էր նկատել ու որոշել երկուսի երեսների գծագրութիւնը:

Եկողը բաւականին բարակ ու բարձրահասակ մի մարդ էր, սև ու վառվուն աչքերով ու թուխ պղնձագոյն դէմքով. նա հագած ունէր լայն արաքական բուրնուս, ուստի դժւար չէր ճանա-

չել նրա ցեղական ծագումը: Նա բեգուին էր Արաբիայի անապատից:

— Ո՞րտեղից ես գալիս:

— Տաճկաց բանակից. կոմս լէ-Գիւսելը դեռ կենդանի է, ինձ յաջողւեց այդ իմանալ Մուստաֆա փաշայի զինւորներից:

— Արդեօք քեզ չեն խարել:

— Ոչ, տիրուհի, չեմ կարծում, նա...

— Չէ որ քեզ ասեցի, ուր ինձ այդպէս չ'անւանես:

— Բայց այստեղ մեզ ոչոք չի կարող լսել:

Զօրապետը խորասուգւեց իր մաքերի մէջ. նրա գեղեցիկ երեսը տանջանք էր արտայայտում: Էլ-կադուրը նայում էր նրան կարեկցաբար:

— Ո՞հ, եթէ ես կարողանայի վերադարձնել քեզ քո հանգստութիւնը, նոյն իսկ կեանքիս գնով, ես վազուց այդ արած կը լինէի, զգացւած բացականչեց արաբը:

— Ես գիտեմ, որ դու ինձ հաւատարիմ ես, էլ-կադուր:

— Ես քո խոնարհ սարուկն եմ:

— Ոչ թէ ստրուկս, այլ իմ մտերիմ բարեկամը:

— Ո՞հ, ես կեանքիս մինչեւ վերջը չեմ մոռանայ, որ հայրդ, դուքս դը-Եբոլին, խլեց ինձ իմ նախկին արիւնուշտ տիրոջ ձեռից և ազատեց ինձ սարսափելի տանջանքներից. չէ որ ես նոյնպէս ազատ ու մեծ զօրավարի որդի էի իմ

հայրենիքում, հայրիկիս հետ միասին նժոյգ ձին նստած տիրում էինք ամբողջ անապատին, բայց նենդամիտ թշնամին սպանեց հօրս, ինձ էլ գերի տարաւ. ո՞հ, ինչ սարսափելի օրեր էին՝ տանջանքի օրեր: Հայրիկդ էր, որ ինձ ազատութիւն տւեց, կրթեց և երբէք զգալ չտւեց, որ ես նրա գերին եմ: Նա փրկեց ինձ, իսկ իմ կեանքը այժմ քեզ է պատկանում, հրամայիր, տիրուհի....

— Ծնորհակալ եմ, էլ-Կադուր, ես միշտ հաւատցել եմ քեզ. բայց դու բաւական երկար ծառայել ես մեր բանակում... այժմ գնա տաճիկների մօտ. Աստւած քեզ հետ, ցտեսութիւն:

— Մնաս բարեաւ, տիրուհի:

Ու արարը անյայտացաւ գիշերային խաւարի մէջ:

Այսպէս ուրեմն, այս խօսակցութիւնից մենք իմացանք, որ ահեղ զօրապետ Տեմպեստայի անւան տակ քօղարկուած է հոչակաւոր դուքս դը էրոլիի աղջիկը: Դուքսը յայտնի էր ամբողջ աշխարհին իրքե քաջ ու հմուտ զինւոր ու անպարտելի մենամարտող: Ամեն անգամ, երբ հայրենիքին վտանգ էր սպանում, բոլոր մարդկանց յուսալի հայեացքը դէպի նա էր ուղղւում: Տառապանքների ու տանջանքների օրերում, նագերմարդկային քաջութիւն էր ցոյց տալիս, իսկ խաղաղութեան ժամանակ՝ ամենօրեայ քաղաքացիական պարտքն էր կատարում:

Ահա այսպիսի հօր աղջիկն էր զօրապետ Տեմպեստան:

Նա մանկութեան հասակից իր հօրից սովորել էր սիրել իր հայրենիքի բարեկամներին անկեղծ սիրով, իսկ նրա թշնամիներին՝ ատել անհաշտ ատելութեամբ: Ազգ ու հայրենիք նւիրական էին նրա համար, իսկ խեղճերին ու կարօտեալներին օգնութիւն ցոյց տալ՝ նա քաղցր պարտականութիւն էր համարում:

Հայրը, ասպետական արւեստի մեծ վարպետը, ոչինչ չէր խնայել նոյնը և իր աղջկանը սովորեցնելու և այժմ նրա աշակերտուհին զարմանքի ու հիացմունքի առարկայ էր դարձել բոլորի՝ թէ թշնամու թէ բարեկամի բերանում:

Կոմս դը-Գիւսերը՝ նրա սիրելի նշանածը գերի էր ընկել տաճիկների ձեռքը: Ահա թէ ինչու սիրուց մղւած և հայրենիքի տառապանքներին չը կարողանալով անտարբեր մնալ, այսօր նրան տեսնում ենք տղամարդու զգեստով, սուրը ձեռին անվախ կանգնած հայրենիքի թլշնամիների դէմ:

II

ԱՀԵՂ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

Առաւօտ էր: Ծագող արևը իր առաջին ճառագայթները սփռել էր մշուշով պատած ֆամագոստայի փլատակների վրայ: Տաճկաց ահեղ բանակն արդէն պարզ երևում էր:

Այստեղ այս առաւօտ տիրում էր անսովոր իրարանցում. ոմանք շտապով իրանց զէնքերն էին

մաքրում, միւսները արդէն վաշտ էին կազմել, իսկ յետ մնացողները շտապում էին իրանց առաւօտեան նամազը վերջացնելու։

Չորս կողմը եռում էր կեանքը ու անհամբերութիւն էր տիրում։

Երբ մուէզինների բարձրածայն աղօթքը լուեց, տաճկաց բանակը սկսեց կամաց կամաց շարժւել դէպի պաշարւած քաղաքը։ Նրա առաջին շարքերից դուրս եկաւ մի գեղեցկատեսիլ ձիւոր, բաջաբար աշտանակեց ձիուն և մի քանի հարիւր քայլ մնացած բերդի պարիսպներին, հրամայեց իր զինակիր զինւորին պարզել սպիտակ դրօշակը, ի նշան խաղաղութեան, և բարձրածայն գոչեց իտալերէն։

Դամասկի փաշայի որդի Մուլէյ-էլ-կադելը ճակատամարտի է հրաւիրում բրիստոնեայ ասպետներին. եթէ նրանք չեն համարձակւի դուրս գալու ճակատ առ ճակատ կուելու՝ նշանակում է նրանք վախկոտ են և արժանի չեն ասպետի վեհ անունը կըելու։ Արդ՝ Մուլէյ-էլ-կադելը սպասում է։

Այդ միջոցին պարսպի վրայ երևացին զօրապետ Լաշչինսկին ու զօրապետ Տեմպեստան։

Առաջինը բարձր ձայնով պատասխանեց։

—Այս անգամ Մուլէյ-էլ-կադելը ստիպւած չի լինի ապարդիւն վերադառնալու տաճկաց բանակը։ Ես կը կտրեմ նրա գլուխը սրիս մի հարւածով։ Բացի ինձանից այստեղ կայ մի ուրիշ քաջ առ-

պետ, որը նոյնպէս պատրաստ է մենամարտելու քեզ հետ, ով Մուլէյ-էլ-կադել։ Ես սպասում եմ ձեզ։

Զօրապետ Տեմպեստան ու Լաշչինսկին գուրս եկան քաղաքից՝ ոտից գլուխ զրահաւորւած ու նժոյգներ հեծած։

—Դուք իսկապես ուզամ էք մենամարտել նրա հետ, հարցըց Լաշչինսկին։

—Ի հարկէ։

—Ոյն ժամանակ վիճակով որոշենք, թէ մեղանից ով պէտք է առաջինը կռւի։

—Ուրախութեամբ։

Զօրապետ Լաշչինսկին հանեց զրպանից մի ցեխին *) և հարցըց՝ գլուխը, թէ խաչը։

—Գլուխն ինձ, ասաց Տեմպեստան։

Զօրապետը բարձր նետեց փողը օդի մէջ, որը ընկաւ գետին խաչով։

—Այսպէս ուրեմն, առաջին հերթը ձերն է, զօրապետ Լաշչինսկի։

—Ո՞հ, ես նրան այժմ ցոյց կըտամ իմ սրի ոյժն ու զօրութիւնը։ Գնանք ուրեմն։

Եւ նրանք քշեցին իրանց նժոյգները. բայց քանի մօտենում էին տաճիկ ասպետին, այնքան Լաշչինսկու տրամադրութիւնը վատանում էր։

—Ես համոզւած եմ, որ իմ ձին ինձ կը

*) 8հեկինը ոսկի գրամ էր, որը կտրում էր վեճեափեկում 1280 թւականից։ Մեր փողով արժէ մօտ 5 ոսկելի։ Առեկելում շատ տարածւած դրամ էր։

դաւաճանէ. բերդում կարծես թէ դիտմամբ այսպիսի վատ ձի տուին ինձ:

—Ընդհակառակը, ձեր ձին շատ լաւ է ու հանգիստ:

—Դուք ոչինչ չէք հասկանում ձիու լաւ ու վատից, օրիորդ բայց, բան է, եթէ այդ վայրենի տաճիկը ինձ վիրաւորեց, այն ժամանակ ես, կեանքս ազատելու համար, իսկոյն և եթ կընդունեմ իսլամի կրօնը:

—Ոչինչ, լաւ քրիստոնեայ էք:

—Է՞ն, ինչ քրիստոնեայ, ինչ մահմեդական: ձեր ներկայութիւնն է, օրիորդ, ինձ ստիպում այստեղ դտնւել. ոհ եթէ ես կարողանայի իմ ազգանունն ձեզ նւիրել: Մի բարկանաք, ես լաւ գիտեմ ձեր ո՞վ լինելը: Դուք դքսուհի դը-եբոլին էք...

Նա չը վերջացրեց իր խօսքը. նրանք արդէն հասել էին ճակատամարտի տեղը:

Մուլէյ-էլ'-կադել տասը բայլից ուշադրութեամբ դիտում էր իր հակառակորդներին, կարծես թէ ուզում էր նրանց քաջութիւնն ու ընդունակութիւնն ուսումնասիրել:

—Ո՞վ է ձեզանից առաջինը մենամարտելու ինձ հետ, հարցրեց նա սուրբ բարձրացընելով:

—Ես, լեհաստանի մութ անտառների արջս, խրոխտաբար բացականչեց Լաշչինսկին:

—Ես պատրաստ եմ, համեցէք ուրեմն:

—Ես սովոր չեմ սպասելու, գոռաց Լաշչինսկին ու արագութեամբ քշեց իր ձին հակառակորդի վրայ:

Եւ նրանք հանդիպեցին միմեանց:

Սակայն առաջին երկու հարւածներից յետոյ Լաշչինսկին սկսեց թուլանալ. նրա գոռող ձայնը լռեց, քաջարի կերպարանքը վախկոտութեան նշաններ արտայայտեց և մի երկու հարւածից յետոյ նա վիրաւորւած վայր գլորւեց ձիուց:

—Առիւծը արջին յաղթեց, ուրախ կանչեց կտրիճ արաբը:

Տաճկաց բանակը ուրախութեան աղաղակներով ողջունում էր իր անյաղթելի հերոսին:

Սակայն զօրապետ Տեմպեստան ժամանակ չը կորցրեց, նա արագութեամբ քշեց իր ձին, պարզեց սուրբն ու ասաց.

—Մինիօր, այժմ ինձ հետ էք գործ ունենալու:

Տաճիկ հերոսը մասամբ զարմանալով, մասամբ սիրաբար նայեց երիտասարդ ասպետին:

—Ո՞ւմ, ձեզ հետ, բայց դուք դեռ պատանի էք:

—Որի հետ դուք մի քիչ աւելի երկար էք կռւելու, բան թէ այս կիսամեռ ծերունու հետ: Գուցէ կը ցանկանայիք մի քիչ հանգստանալ:

—Ոչ, կարիք չեմ զգում, նամանաւանդ որ ձեզ հետ ես հաշիւս շուտ կը վերջացնեմ, դուք շատ թոյլ էք ինձ նման առիւծի դէմ:

—Սակայն, իմ սուրբ թոյլ չէ, պարսն, զգուշացէք նրանից:

—Մենք այդ դեռ կը տեսնենք. բայց ասացէք ինձ ձեր անունը:

— Ինձ կրչում են զօրապետ Տեմպեստա.

— Այդ անունը ինձ համար նորութիւն չէ: Թշնամիները որոշ տարածութիւն հեռացան միմեանցից ու սրընթաց արշաւեցին իրար դէմ:

Սկսւեց ահեղ մենամարտը: Մուլէյ-էլ-Կադելին վերջապէս արժանի հակառակորդ էր պատահել: Երկուսն էլ կուռում էին զարմանալի հմտութեամբ: Բաղդը դեռ հաւասարակշռութիւն էր պահպանում:

Չորս կողմը հաւաքւած քրիստոնեայ և մահմեղական զինւորները քաջալերում էին իրանց հերոսներին:

— Անհոգ կաց, զօրապետ Տեմպեստա, Աստւած խիզախների հետ է:

— Կեցցէ սուրբ խաչի պաշտպանը:

— Խփիր, ջախջախիր այդ շանը, մեր քաջ առիւծ:

— Մարգարէն քեզ օգնական, մեր պանծալի հերոս:

Զօրապետ Տեմպեստան վերին աստիճանի սառնասրութեամբ էր կուռում, և մինչդեռ տաճիկ հերոսի ձին սկսում էր յոզնել, նրա ձին աւելի էր տաքանում:

Յանկարծ զօրապետ Տեմպեստան գոռաց:

— Պաշտպանւիր, Մուլէյ-էլ-Կադել, և սրով հարւածեց թշնամու աջ կուն տակին, որտեղ բաց տեղ կար:

Տաճիկը գոռաց ցաւից ու զայրոյթից և վայր լգորւեց ձիուց:

— 17 —
7/31 1922
Ճակատամարտի օրէնքով ՏԵՄՊԵՍՏԱՆ կարող էր նրան սպանել, բայց չը սահմանավայրութեամբ տող քրիստոնեաների պահանջին՝ նա թանձնած վիրաւորւած ասպետին.

— Սպանեցէք ինձ, ասաց վերջինս, այդ ձեր իրաւունքն է:

— Ես սովոր չեմ անգէն մարդկանց սպանել, պատասխանեց Տեմպեստան, դուք քաջ հերոս էք և ես ձեզ եմ նախրում ձեր կեանքը:

— Քրիստոնեայից ես այդպիսի վեհանձնութիւն չէի սպասիլ. շնորհակալ եմ, ես այդ երբէք չեմ մոռանայ:

— Ծտեսութիւն, պարոն, — ասաց զօրապետ Տեմպեստան և դարձրեց ձիու գլուխը դէպի պաշտամած քաղաքը:

— Մահ, մահ նրան. մեր սիրելի հերոսի վրէժը առնենք... — գոչեց, ինչպէս մի մարդ, տաճիկ զօրքը ու արագութեամբ յարձակեց զօրապետ Տեմպեստայի վրայ: Մահը անխուսափելի էր:

Այդ միջոցին Մուլէյ-էլ-Կադելը գերմարդկային ճիգեր թափեց, ոտի ելաւ ու գոռաց.

— Յետ կանգնեցէք, անիրաւներ, թէ չէ ձեզ բոլորիդ ցից հանել կը տամ:

Վայրկենաբար զօրքը կանգնեց և զօրապետ Տեմպեստան ազատ հասաւ ամրոցը, ուր նրան ովսաննաներով ու փառաբանութեամբ դիմաւորեցին:

Հազիւ նա մի՞քիչ հեռացել էր, երբ զօրապետ Լաշխինսկին գլուխը բարձրացրեց ու տեղից վեր ելաւ։

—Մենք դեռ կը հանդիպենք միմեանց, սիրելի օրիորդ, ասաց նա։

Այդ շարժումը աննկատելի չըմնաց Մուլէյ-էլ՝ Կաղելի համար։

—Բա, ուրեմն յաղթւած ասպետը դեռ կենդանի է, բացականչեց նա։

—Եֆենդի, դու ուզում ես ինձ կեանքիցս զրկել, տաճկերէն դիմեց նրան Լաշխինսկին. ես հրաժարում եմ հայրերի կըօնից ու ընդունում եմ մահմեղականութիւն, ուրեմն դու այժմ սպանելու ես քո դաւանակցին։

—Լաւ, ես կը հրամայեմ, որ քեզ բժշկեն։

Այդ էր ինձ միայն հարկաւոր, մտածեց Լաշխինսկին։ —Մենք դեռ կը պատահենք միմեանց Տեմպեստա, խօսեց ինքն իրեն Լաշխինսկին։

III

Յ. Ա Թ Զ Ա Կ Ո Ւ Մ Ը

Անցաւ մի քանի օր, մի մութ գիշեր էր. զօրապետ Տեմպեստան իր մտերիմ ընկերոջ՝ սինիօր Պերպինիանօյի հետ կանգնած էր բերդի պարսպի վրայ։ Չորս կողմը խորին լոռութիւն էր տիրում, միայն ժամանակ առ ժամանակ պահապանների ձայներն էին լսւում։

Ցանկարծ նրանք, գիշերային այս խաւարի

մէջ, մի ինչ որ մարդ նկատեցին, որը զգուշութեամբ սողում էր դէպի պաշարւած քաղաքը։

Երկուսն էլ մի վայրկեանում մերկացրին իրանց սրերը և մնացին պատրաստ կանգնած։

—Այդ ես եմ, տիրուհի, չը խփես, լսւեց ծանօթ ձայնը։

—Այդ դու ես, էլ՝ Կաղուր։

—Այս, ես եմ, տիրուհի։ Դու երկի մտատանջութեան մէջ ընկար երկարատև բացակայութեանս պատճառով։

—Այս, պատասխանեց զօրապետ Տեմպեստան։ Ես կարծեցի, թէ դու անզգուշութեամբ մատնեցիր քեզ։

—Զէ, նրանք ինձ վրայ շատ վստահ են. ձիշտ է, այն օրը, երբ դու մենամարտելու էիր Մուլէյ-էլ՝ Կաղելի հետ, ես ոտից գլուխ զինւած սպասում էի և որոշել էի նրան սպանել, եթէ դու նոյն իսկ վիրաւորւած լինէիր... փառք Աստծոյ, ամեն ինչ լաւ վերջացաւ. բայց, դիտես, զօրապետ, այդ տաճիկը երկաթի կաղմւածք ունի՝ նա երեք օրից յետոյ ընդունակ կը լինի նոյն իսկ ձի նստելու։ Առողջանում է նոյնպէս և զօրապետ Լաշխինսկին։

—Ի՞նչ... Լաշխինսկին...

—Այս. նա խլամութիւն ընդունեց ու այժմ տաճկական գնդի զօրապետ է նշանակւած։

—Անիրաւ դաւաճան, գոռաց սինիօր Պերպինիանօն, չը կարողանալով բարկութիւնը զըպել։

— Սակայն, թոյլ տւէք մի շատ կարևոր լուր յայտնելու:

— Մենք լսում ենք, Էլ'-Կադուր:

— Տաճիկները որոշել են այս գիշեր վերջին յարձակումը գործել ։ Նրանց նպատակն է՝ կամ վերցնել քաղաքը, կամ մեռնել:

— Ուրեմն ժամանակ չը կորցնենք, ասաց զօրապետ Տեմպեստան, գնանք պատրաստւենք պաշտպանւելու:

Եւ իսկապէս, նա դեռ չէր վերջացրել իր խօսքը, երբ սկսւեց սարսափելի թնդանօթաձգութիւնը, որի ընդմիջուների ժամանակ լսում էր տաճիկ զինւորների ռազմական երգը: Նրանք արագութեամբ գնացին պաշտպանելու քաղաքը:

Սինիօր Պերպինիանօն և Էլ'-Կադուրը խօսք տիւն միմեանց՝ ոչ մի վայրկեան չը հեռանալ զօրապետ Տեմպեստայից և պաշտպանել նրան մինչև արեան վերջին կաթիլը:

Քաղաքացիք էլ նոյնպէս պատրաստւել էին դիմադրութիւն ցոյց տալու. այս անգամ զէնք էին վերցրել ոչ միայն զինւորները, երիտասարդները, այլ նոյն իսկ հիւանդները, կանայք ու երեխաները: Պաշարւածները հաւաքւել էին սուրբ Մարկոսի բաստիոնը, իրեւ միակ ապահով տեղ, որը դեռ չէր քանդւել թշնամու թնդանօթների հարւածներից և որին տիրելը—կը նշանակէր տիրել ամբողջ քաղաքին:

Ամենից առաջ շարժւեց տաճիկ հեծելագունդը, որին քաղաքից դիմաւորեցին գնդակ-

ների սարսափելի տարափով, և, չնայած դրան, նրանք անվախ առաջ ու առաջ էին շարժւում: Նրանց հետևում էին հետևակները և ապա թնդանօթաձիգ գունդը:

Ամեն տեղ մահ ու սարսափ էր տիրում: Վիրաւորւածների աղաղակը, մեռնողների վերջին ճիգը, ազգականների ու ծնողների լացն ու կոծը, գրոհ տւող զօրքերի մարտական երգը, պաշտպանւողների ընդդիմադրութեան կոչը—այդ բոլորը խառնւել էին թնդանօթների որոտմանը և սրերի շառաչիւնին, կազմելով մի զարհուրելի համերգ.

Մահը իր յաղթական երգն էր երգում:

Կուի տագնապի ժամանակ զօրապետ Տեմպեստային, որ կանգնած էր պաշտպանների առաջին շարքում, մօտեցաւ Էլ'-Կադուրը:

— Անկման ժամը մօտ է, ասաց նա:

— Մենք պատրաստ ենք մեռնելու, հնագանդութեամբ պատասխանեց զօրապետ Տեմպեստան:

— Բայց ի՞նչ է լինելու սինիօր լէ-Գիւսերի դրութիւնը:

— Նրան էլ Աստւած կ'օգնէ:

Փախիր, տիրուհի, քանի դեռ ժամանակ կայ, ես մի ապահով տեղ գիտեմ:

— Դու մոռանում ես, Էլ'-Կադուր, որ ես այս զրահները գւարճութեան համար չեմ հագել, խիստ յանդիմանեց նրան զօրապետը: Այսպիսի բոպէներում, երբ իմ թուրը դեռ

հարկաւոր է ֆամագոստայի խեղճ բնակիչներին պաշտպանելու համար, ես վախկոտ ու անիրաւ կը լինեմ, եթէ փախչեմ...

— Տիրուհի, լաւ մտածիր, մահը արդէն մօտ է... Մուստաֆա փաշան հրաման է տւել ոչ ոքի չը խնայել:

— Մի վախիր, իմ սիրելի էլ՝ կադուր, ես ոչ միայն կուել, այլ և մեռնել գիտեմ: Ոչ մի վայրկեան իմ քաջութիւնս ինձ չի դաւաճանի: Մի խնդրիր ինձ... իմ խօսքս՝ խօսք է, և որոշում՝ հաստատ:

— Չորս կողմը սարսափելի տեսարան էր: Արդէն տեղ տեղ թշնամին ներս էր խուժել քաղաք. պաշտպանւողների թիւը քանի զնում քչանում էր, մինչդեռ յարձակողների բանակը աւելանում էր նորանոր ուժերով:

Մահը սաւառնում էր քաղաքացիների գըլ-խին. բոլորը այդ զգում էին, ուստի ամեն մէկը աղաչում էր Աստծուն, որ թոյլ տար գոնեա զէնքը ձեռին մեռնել:

Ենիշարիները *) իրանց սովորական գործն

*) Հին Տաճկաստանում քընսառնեայ հպատակների վրայ ի թիւն այլ տուրքերի, դրաւծ էր և «արեան տուրքը»: Պետութիւնը պարքերաբար հաւաքում էր քընսառնեայ մանուկներին, կրօնափոխ անում նրանց ու այդպիսով կազմում ապագայ Ենիշարիների գնդերը: Չունենալով ոչ հայրենիք, ոչ մի սրբութիւն, ենիշարիները պատուհաններ էին ոչ միայն արտաքին թշնամիների, այլ և իրենց հայրենակիցների և նոյն իսկ սուլթանների համար, որոնք շատ անգամ գանցնկեց էին լինում նրանց ցանկութեամբ: Անցեալ դարի սկզբին սուլթան Մահմուդ Ա-դը ցրւեց ու ոչնչացրեց նրանց կազմակերպութիւնը (26 յունիսի 1826 թ.):

Էին կատարում: Նրանց սրերը խղճալ չը գիտէին. ուր նրանք անցնում էին, այնտեղ արեան գետեր էին հոսում:

Զօրապետ Տեմպեստայի շուրջը խմբւել էին կենդանի մնացած մի խումբ խիզախ զինւորներ, որոնք արտասովոր քաջութիւն էին ցոյց տալիս. իրանց սիրելի զօրապետը, սինիօր Պերպինիանօն և էլ՝ կադուրը անձնական օրինակով քաջալերում էին նրանց:

Յանկարծ զօրապետ Տեմպեստան զէնքը ձեռից վայր ձգեց ու ընկաւ գետին:

— Ո՞հ, Ալլահ, նրան սպանեցին, դոռաց սարսափած էլ՝ կադուրը:

Նա արագութեամբ գրկեց իր տիրուհուն, ինչպէս մի փոքրիկ երեխայի, և զգուշութեամբ դուրս եկաւ կուի ասպարէզից, և գնդակների տարափի տակ դիմեց դէպի քաղաք, ուր մտան մի մութ գետնափորի մէջ:

Այստեղ նա վիրաւորին վայր դրեց ու մտածեց՝

Եթէ ֆամագոստան այս գիշեր կործանւի՝ տիրուհին ու ինքը, նրա հաւատարիմ ստրուկը, կը թագւին նրա վիլատակների տակ:

Ծետոյ նա կայծաքարով կրակ արաւ ու լուսաւորեց գետնափորը:

Սա մի զինւորական մթերանոց էր բերդի պարիսպներից մէկի տակ:

— Արարը մօտենալով վիրաւորւածին ուրախացած բացականչեց՝

— Ա՛հ, արիւն է գալիս, նշանակում է նա դեռ
կենդանի է:

Օրիորդը բացեց աչքերը:
— Այդ դժւ ես, էլ՝ Կաղուր:
— Այն, տիրուհի:
— Ես վիրաւորւած եմ... արդեօք քաղաքին
տիրեցի՞ն. մի գնա տես...
— Բայց դու...

— Ոչի՞նչ, իմ մասին մի մտածիր, ես ինձ
բաւականին լաւ եմ զգում,

Այդ միջոցին մի ինչ-որ աղմուկ լսւեց, որը
քանի գնում սաստկանում էր. կարծես թէ պա-
րսպի տակը փորում էին:

Էլ՝ Կաղուրը արագութեամբ պատրաստեց
ատրճանակը-ու կանգնեց պատի մօտ. մի քանի ըո-
պէից յետոյ մի ինչ-որ մարդու կերպարանը
նկատեց:

Դեռ չը սպանեմ նրան, մտածեց նա, այլ
սպանեմ մինչև մօտենայ:

Երբ խորհրդաւոր մարդը արդէն բոլորովին
մօտ էր նրանից, նա ատրճանակը հանդարտու-
թեամբ ուղղեց դէպի նա ու գոռաց՝

— Ո՞վ ես. պատասխանիր թէ չէ...
— Սպասիր, էլ՝ Կաղուր, այդ ես եմ, լսւեց
սինիօր Պերպինիանօի ձայնը:

Նրա տեսքը արասափելի էր: Գլուխը փա-
թաթւած էր մի ինչ որ կտորով, ինքն էլ արեան
մէջ կորած... Սուրը բոլորովին կոտրատւած էր,
միայն կոթն էր մնացել:

— Այդ դժւք էք, սինիօր Պերպինիանօ:

— Այս. բայց ի՞նչ եղաւ զօրապետը:

Այդ միջոցին վիրաւոր զօրապետը երեսը
դէպի նա դարձնելով մրմնջաց.

— Ա՛հ, սինիօր Պերպինիանօ, այդ ի՞նչպէս
ազատւեցաք:

— Միմիայն հրաշքով. մենք կատաղօրէն
կուռում էինք... Աստորքէն, Բալոնէն, Մարտի-
նենգըոն և միւս ընկերներս սպանւած են, և
երբ վերջին զինւորը ընկաւ՝ իմ մնալը այլևս
անօգուտ էր... ես ուժասպառ էի եղել... ես
նկատեցի, ինչպէս էլ՝ Կաղուրը կուից դուրս
տարաւ ձեզ, բայց այն ըովէին չէի կարող թող-
նել կոկուր, ուստի երբ ազատւեցի, գուշակեցի,
որ էլ՝ Կաղուրը ձեզ բերած կը լինի այս գետնա-
փորը, ես էլ շտապեցի այստեղ...

— Ուրեմն ֆամագոստան արդէն թշնամու
ձեռին է:

— Այն, զօրապետ. Մուստաֆան տիրացաւ
նրան. այժմ ենիշարիներն են այնտեղ շահատա-
կում:

Եւ իսկապէս, այնտեղ, բաղաքում թնդա-
նօթները արդէն լոել էին, զէնքերը թափւել էին,
որովհետեւ կենդանի մարդ չէր մնացել նրանց
վերցնելու:

Մեռնող պաշտպանի վերջին շունչի հետ,
վերջին անգամը շունչ բաշեց և ազատ ֆամա-
գոստան յաւիտեան ընկաւ...

IV

ՄՈՒԼԵՅ ԷԼՇԿԱԴԵԼ

Մի քիչ հանգստանալուց յետոյ սինիօր Պերպինիանօն պատրաստւեց գնալու:

—Այդ ուր, հարցը զօրապետ Տեմպեստան:

—Ես քաղաքում երկու քրիստոնեաներ տեսայ, գնամ նրանց էլ բերեմ այստեղ. թէ չէ կարող են ենիշարիների ձեռն ընկնել:

—Բայց ովքեր են նրանք:

Մի շիփեր^{*)} ու մի նաւաստի, որոնք Վենետիկից ուղարկեած էին մեզ օգնելու:

—Իսկ որտեղ են թագնւել նրանք:

—Մի ինչ որ գետնափորում, որտեղ սաստիկ խոնաւ, մութ ու անտանելի է. նրանք մեզ շատ օգտակար կարող են լինել:

Եւ սինիօր Պերպինիանօն զգուշութեամբ գնաց դէպի անցքը:

Նրանք մնացին մենակ:

—Ինչ ենք անելու, էլ՛-կադուր... Մենք բոլորովին ուտելու բան չունենք: Բայց այդ դեռ ոչինչ... ինչպէս ենք ազատւելու այստեղից, որ կարողանանք մեր գլխաւոր նպատակը իրագործել՝ կոմս էլ՛-Գիւսերին ազատել այդ սարսափելի դրութիւնից:

—Մի մարդ կայ, տիրուհի, որ քեզ կառող է օգնել:

*) Շկիպեր—մարտանակի մթերանոցի վերակացաւ.

—Ո՞վ է այդ մարդը:

—Դա տաճիկ ասպետն է՝ Մուլէյ-էլ՛-կարգել, որը վերին աստիճանի վեհանձն ու ազնւաբարոյ մարդ է:

—Որին ես յաղթեցի:

—Այն, տիրուհի:

—Դու կարծում ես նա մեզ կ'օգնէ:

—Նա մի այնպիսի անձնաւորութիւն է, որից նոյն իսկ ինքը Մուստաֆան պատկառում է:

—Բայց ինչպէս դիմենք նրան:

—Ես ինքս կը գնամ նրա մօտ և պարզօրէն կը պատմեմ մեր զրութիւնը. նա անշուշտ մեզ կ'ազատէ և նոյն իսկ կ'աջակցէ կոմս լէ-Գիւսերին ազատելու:

—Նրա այդպիսի յատկութիւնների մասին դու մրտեղից գիտես:

—Ինձ պատմել է նրա սպասաւորներից մէկը:

—Իսկ եթէ օգնութեան վոխարէն նա սպանել տայ քեզ:

Արաբը անորոշութեամբ շարժեց ձեռը:

—Այն ժամանակ քո խոնարհ ստրուկը կը հանգստանայ կեանքի տանջանքներից:

—Դէհ, գնա, իմ սիրելի էլ՛-կադուր:

Արաբը արագութեամբ զինւեց, փաթաթւեց բուրնուսով ու կտրուկ ձայնով, որ իր էր վճռականութեամբ, ասաց.

—Կամ դու պէտք է ազատւած լինես, կամ նա սպանւած:

«Խեղճ էլ՛-կադուր, որքան հաւաստարիմ ես

դու ինձ», մտածեց զօրապետ Տեմպեստան:

Մի քանի ըոպէից յետոյ արարը ատրճանակը ձեռին արդէն կանգնած էր պահապանի առաջ:

— Ո՞վ ես դու:

— ԶԵս տեսնում, որ ես արար եմ և ոչ թէ բրիստոնեայ, էլ գոռալդ ինչ է: Ես Հուսէին փաշայի զինւորներից եմ:

— Ինչու ես եկել:

— Մուլէյ-էլ՝ կաղելին ասելիք ունիմ:

Պահապանը ներս գնաց ու իսկոյն և եթ վերադարձաւ:

— Տէրս քեզ սպասում է:

Էլ՝ կաղուրը հետևեց ծառային, ու նրանք ներս մտան մի փոքրիկ՝ առանց որ և է զարդարանքի սենեակ: Թախտի վրայ նստած էր մի զեղեցիկ երիտասարդ: Դա Մուլէյ-էլ՝ կաղելին էր:

— Ո՞վ ես դու, հարցրեց նա, երբ ծառան հեռացաւ:

— Իմ անունս քեզ ոչինչ չի ասիլ, պատասխանեց էլ՝ կաղուրը:

— Քեզ ուղարկել է Հուսէին փաշան:

— Ո՞չ, պարոն, ես ստեցի:

Մուլէյ-էլ՝ կաղելը արագութեամբ երկու քայլ յետ քաշւեց ու ձեռը դէպի սուրը տարաւ: Էլ՝ կաղուրը նոյնպէս յետ յետ գնաց ու խոնարհութեամբ ասաց.

— Զը կարծես թէ, պարոն, եկել եմ քեզ սպանելու:

— Ապա ինչու դու խարեցիր:

— Որպէսզի կարողանայի քեզ տեսնել:

— Ո՞վ է քեզ ուղարկել:

— Այս կինը, որին դու պարտական ես կեանքովդ:

— Կի՞ն... ով է նա, զարմացած ու զայրացած հարցրեց ասպետը:

— Այո, այն կինը, որից ստացած վէրքդ մինչև հիմա դեռ չէ բուժւել...

— Ի՞նչ... իմ վէրքը... գժուել ես ինչ է... ինձ վիրաւորեց քաջ ու ազնիւ զօրապետ Տեմպեստան...

— Որը դուքս գ'երոլիի դուստրն է:

— Ո՞հ, ես յաւիտեան խայտառակւեցայ... ուրեմն ինձ վիրաւորողը կին էր... կացականչեց Մուլէյ էլ՝ կաղելը:

— Բայց յայտնի ասպետի աղջիկ...

— Ինձ հետ մենամարտողը ինքն ասպետը չէր... այլ նրա աղջիկը, որը այժմ երկի ծաղրով է յիշում ինձ:

— Ընդհակառակը, յարգում է, դրա համար էլ ուղարկել է ինձ քեզ մօտ՝ քո օգնութիւնը խընդուելու:

— Ես պատրաստ եմ... ես ցանկանում եմ նրան տեսնել... նա երեխ ուզում է ֆամագոստայից հեռանալ:

— Այո, բայց նա մի ուրիշ խնդիր էլ ունի:

— Դէ՞հ, տար ինձ նրա մօտ:

— Գնանք ուրեմն, պարոն:

Մուլէյ-էլ'-կաղելը ու էլ'-կաղուրը դուրս
եկան սենեակից: Առաջինը հրամայեց սպասա-
ւորին վերցնել զանազան տեսակ ուտելիքներ ու
ըմպելիքներ ու հետեւ նրանց:

Էլ'-կաղուրը զգուշութեամբ հասցրեց նրան
գետնափորը:

Երիտասարդ տաճիկը սիրալի ու քաղաքա-
վարի բարեկց սինիօր Պերպինիանօին և նրա
երկու ընկերներին, որոնք արդէն վերադարձել
էին, ու արագութեամբ մօտեցաւ զօրապետ Տեմ-
պետային:

— Յարգանքներս, առիւծ յաղթող օրիորդին,
ասաց Մուլէյ-էլ'-կաղելը բարեկելով նրան. Ես
եկել եմ այստեղ ոչ իբրև թշնամի, այլ միմիայն
իբրև բարեկամ: Ես շատ անդամ հնարաւորու-
թիւն եմ ունեցել հիանալ ձեր եզակի քաջու-
թեամբ: Հրամայեցեք և ես պատրաստ եմ ձեզ
հնազանդւելու: Այս վայրկեանիս ինձ երջանիկ
եմ համարում, որ հնարաւորութիւն ունեմ գէթ
մասամբ վերադարձնել իմ պարտքը:

Զօրապետ Տեմպետան զարմանքով լսում
էր նրա ասածը:

— Այդ դուք էք, Մուլէյ-էլ'-կաղել, խօսեց
Տեմպետան:

— Այս, օրիորդ, դուք կարծում էիք որ ես
չ'եմ գալ:

— Ես կարծում էի, որ դուք ոչ միայն չ'եք
գալ, այլ և իմ խեղճ էլ'-կաղուրն էլ չի վերա-
դառնայ: Բայց այժմ ես համոզմունքս փոխեցի.

Դուք որքան կուռւմ քաջ էք, այնքան էլ կեանքի
մէջ ազնիւ էք ու վեհանձն:

— Ուրեմն հրամայեցէք, օրիորդ, ես պատ-
րաստ եմ ձեզ ծառայելու:

— Ես ուզում եմ ընկերներիս հետ միասին
հեռանալ ֆամագոստայից...

— Եւ վերադառնալ իտալիա:

— Բայց առայժմ ոչ:

Տաճիկ ասպետը զարմացած նայում էր
օրիորդին:

— Ես ուզում եմ ազատել քաջ լէ-Գիւսե-
րին. դուք երկի նրան ճանաչում էք: Այդ իմ
ամենաջերմ ցանկութիւնն է:

— Այս, ինչպէս չէ... Ես նրա քաջութեան
մասին շատ եմ լսել: Այժմ նա գերի է և
գտնուում է հուսսիֆեան ամրոցում:

— Ուրեմն նա գեռ կենդանի՞ է:

— Այս:

— Շնորհակալութիւն ձեր տւած տեղեկու-
թիւնների համար, մենք ոչինչ չը գիտէինք նրա
մասին:

— Շատ գեղեցիկ. վաղը առաւօտեան ձեր
ուղերութեան համար արդէն ամեն բան պատ-
րաստ կը լինի: Հինգ տաճկական զգեստներ, զէն-
քեր ու ձիեր. իսկ ծովի ափին ձեզ կապասէ նա-
ւակը: Ուրեմն առայժմ բարի գիշեր:

Եւ նա հրաժեշտ տալով բոլորին հեռացաւ
գետնափորից իր ծառայի հետ միասին: Մնացող-
ներն էլ յոդնած և ուժասպառ լնկան գետին ու

Խոր քուն մտան ապագայ ազատութեան լոյսերով լի:

Միայն էլ՝ կաղուրը մնաց արթուն: Հրացանը ձեռին, նա մօտեցաւ անցքին ու անշարժ կանգնեց մինչև առաւօտ:

Դեռ արել չէր ծագել, երբ Մուլէյ-էլ՝ կադելը ներս մտաւ գետնափորը, ոտից մինչև գլուխ զինւած իր չորս սպասաւորներով: Սպասաւորները գետին դրին երկու մեծ զամբիւղ շորերով, զէնքով ու այլ անհրաժեշտ պիտոյքներով լիբը:

— Ահա և ես, ասաց Մուլէյ-էլ՝ կադելը. ես արդէն պատրաստեցի ինչ որ անհրաժեշտ է, մնում է, որ դուք ճանապարհ ընկնէք: Նժոյգները դուրսը արդէն խրինջում են, իսկ ծովի ափին պատրաստ սպասում է նա, որը ձեզ կը հասցնէ Հուսսիֆ ամրոցը. նաւաստիները դաւանափոխ յոյներ են, որոնց սրտի մէջ դեռ շատ վառ է իրանց նախկին քրիստոնէական հաւատը, ուստի նրանք ուրախութեամբ ձեզ կ'օգնեն: Ես ամեն ինչ այնպէս պատրաստել եմ տւել, որ անհնարին ինի ձեզ իմ հայրենակիցներից ջոկել: Դէ՞... պատրաստեցէք, օրինրդ:

Նա իր ձեռքով զամբիւղից հանեց զգեստները և բաժանեց ամենքին:

Մի երկու ըոպէից յետոյ բոլորը արդէն պատրաստ ու զինւած էին:

Նրանք դուրս եկան գետնափորից, որին առջ նրանց սպասում էին տասը շքեղ թամբած արաբական ձիեր:

Մուլէյ-էլ՝ կադելը օրիորդին օգնեց նժոյգը հեծնելու:

— Սա իմ սեպհական ձին է. նրան ոչոք չի կարող համնել, ոչ մի նժոյգ աշխարհում և նոյն իսկ քամին: Թամբից կախած կըդտնէք երկու ատրճանակ ու մի փոքրիկ գումար:

— Ո՞հ, Մուլէյ-էլ՝ կադել, որքան բարի էք դուք, ես նոյն իսկ չը գիտեմ թէ ինչպէս երախտահատոյց լինիմ ձեզ...

— Հանգստացէք, օրիորդ, ես իմ պարտականութիւնն եմ կատարում, պատասխանեց տաճիկ ասպետը. յետոյ դիմելով միւսներին հարցրեց.

— Պատրմատ էք բոլորդ, ուրեմն յառաջ: Եւ բարաւանը արշալոյսի առաջին շողերի տակ արագութեամբ առաջ շարժւեց:

Նրանք արդէն դուրս էին եկել բաղաքից և մօտեցել բերդի պարիսպներին, երբ մի անսպասելի ձայն լսւեց.

— Ում համար թանգ է կեանքը՝ թող կանգ առնի:

— Լաշչինսկի, միաժամանակ բացականչեցին երեքը միասին:

Իրաւ, նախկին զօրապետ Լաշչինսկիին— այժմ իւսուֆ-Համմադա— մի խումբ ենիշարիների հետ կանգնած էր բերդի կամուրջի մօտ:

Մուլէյ-էլ՝ կադելը դուրս եկաւ ձիաւորների շարքից և առաջ անցնելով գոռաց.

— Ո՞վ է համարձակւում իմ ճանակտրել:

— Այս ամրոցի զօրապետը:
 — Եաւ, իսկ դու գիտե՞ս ով եմ ես:
 — Ի՞նչպէս կարող եմ քեզ չը ճանաչել. չէ
 որ դու էիր մենամարտի ժամանակ ինձ վէրք
 հասցնողը:
 — Ա՛հ, ուրեմն դու այն ռենեգատն *) ես...
 բայց եթէ գիտես իմ ով լինելս, էլ ինչու ճա-
 նապարհ չես տալիս:
 — Ես ձեզ կը պահեմ մինչև որ բաց թող-
 նելու հրաման ստանամ:
 — Դու ցնդել ես... ճանապարհ առիւծին,
 գոռաց Մուլէյ-էլ'-կաղելը:
 Զօրապետ Լաշխնսկին հանեց ատրճանակը:
 — Ի՞նչ... դու ուզում ես կրակել... յառաջ
 — գոռաց, Մուլէյ-էլ'-կարգելը:
 — Զարկէք նրան, հրամայեց Լաշխնսկին:
 Սակայն նրա զինւորները ոչ միայն տեղից
 չը շարժւեցին, այլ, ընդհակառակը, միաձայն
 գոռացին.
 — Կեցցէ Մուլէյ-էլ'-կաղելը:
 Զիաւորները ազատ անցան կամուրջը և
 դուրս եկան բերդից: Երեք ժամից յետոյ նրանք
 արդէն ծովի ափին էին:
 Նաւը պատրաստ սպասում էր ծովի եղերքին:
 Զիաւորները իջան իրանց նժոյգներից և
 արագութեամբ մտան նաւը, որտեղ նրանց դի-
 մաւորեց նաւախումբը, որը բաղկացած էր քսան
 յոյն դաւանափոխ քրիստոնեաներից:

*) Ռենեգատ—կըօհափոխ, հաւատութեաց.

Ծերունի Ստարկէն՝ այն վենետիկեան նա-
 շաստին, որին ազատեց սինեօր Պերպինիանոն,
 մի վերին աստիճանի գուարճախօս, ծիծաղաշարժ
 ու միկնոյն ժամանակ բարի ու ազնիւ մարդ էր,
 երբ ուսը գրեց նաւին, ուրախութեամբ բացա-
 կանչեց.

— Ո՛հ, ինչ լաւ նաւ է... այ, սա իմ բանն
 է: Այս նաւի վրայ նոյն իսկ կարելի է չը վա-
 խենալ Ալի փաշայից... Դու ի՞նչպէս ես կարծում,
 Սիմէն, դիմեց նա երիտասարդ ընկերին:

— Իրաւ որ շատ լաւն է, եթէ նոյն իսկ
 Ալին մեզ վրայ յարձակուի, վայ նրա հալին:

Մուլէյ-էլ'-կաղելը մօտեցաւ նաւախմբին,
 որը կարգով շարւել էր նաւի տախտակամածի
 վրայ ու հարցրեց.

— Ո՞վ է ձեր զեկավարը:

— Ե՛ս եմ, պարհն, ասաց նաւաստին առաջ
 գալով:

— Անոնչնդ:

— Նիկոլա Ստրադիոտո:

— Յանձնիր նաւը այս ծերունուն, ասաց
 Մուլէյ-էլ'-կաղելը, ցոյց տալով Ստարկէի վրայ:

— Բայց ես այդպիսի հրաման չունիմ Մու-
 լէյ-էլ'-կաղելից,

— Այդ ես ինքս եմ:

Այն ժամանակ յոյնը խոնարհ գլուխ տալով—
 պատասխանեց.

— Ամեն ինչ պատրաստ է, մենք կարող
 ենք ճանապարհ ընկնել:

— Օրինրդ, դիմեց Մուլէյ-էլ’-կաղելը զօրապետ Տեմպեստային, ես իմ գործը կատարեցի, հետևաբար այժմ ազատ եմ: Սակայն, բաժանման այս ըովէին, ես կ’ուզէի մի քանի խօսք ասել. չը գիտեմ ձեր առաքելութիւնը յաջող ելք կունենայ թէ ոչ. թող Աստւած ձեղ միշտ օգնական լինի. բայց որտեղ էլ լինէք, լաւ իմացէք, որ ունէք մի անձնւէր բարեկամ, որը եթէ հազար կեանք ունենայ, հազարն էլ չէր խնայի ձեզ օգնելու համար: Վտանգի ըովէին յիշէք ինձ:

— Ես շատ դգացւած եմ... ես նոյն իսկ խօսք չեմ գտնում ձեզ իմ շնորհակալութիւնը յայտնելու... Այս մի քանի ժամւայ միջոցին ես սովորեցի ձեզ յարգել ու գնահատել:

— Գնաք բարով, օրինրդ, ես յոյս ունեմ որ մենք երբեիցէ նորից կը պատահենք...

Եւ նա սեղմեց օրիորդի ձեռը ու արագութեամբ ափ իջաւ:

Նաւը մեկնեց ափից և անցնելով խութերի միջից՝ դիմեց դէպի բաց ծովը:

Այդ միջոցին սուր ապառաժի վրայ կանգնած էր մի գեղեցկատեսիլ ու յաղթանդամ ձիաւոր:

Դա Մուլէյ-էլ’-կաղելն էր, որ վերջին հրաժեշտն էր տալիս հեռացողներին:

V

Դ է Պ Ի Ա Մ Ր Ո Յ

Երբ գալիօտը*) մի քիչ հեռացաւ ափից, այնպէս որ նրան այլևս վտանգ չէր սպառնում խութերից ու քարերից, ծերունի Ստարկէն հրամայեց նաւը ուղղել և ափին զուգընթաց ուղղութիւն տալ:

— Պարն, դիմեց Նիկոլա Ստրադիօտօն զօրապետ Տեմպեստային, գալիօտը երկի ձեզ համար է վարձած:

— Այս, ինձ համար է:

— Ե՞րբ էք ուզում տեղ հասնել՝ ցերեկը, թէ գիշերը:

— Իսկ Երբ կարող ենք տեղ հասնել:

— Եթէ եղանակը այսպէս բարեյաջող լինի, մենք մի երկու ժամից յետոյ Հուսսիֆեան նաւահանգիստը կը մտնենք:

— Շատ գեղեցիկ. բայց դուք չէք լսել արդեօք այդ բերդումն եղած քրիստոնեայ գերիների մասին:

— Ինչպէս չէ, լսել եմ, պարոն:

— Ինձ օրիորդ ասացէք, ես պարոն չեմ:

Յոյնը նոյն իսկ չը զարմացաւ այդ խօսքերի վրայ: Հաւանական էր, որ նրան արդէն ամեն

*) Գալիօտ—Փոքրիկ ու թեթև վաճառանաւ:

ի՞նչ բացատրել էին էլ-կադուրը ու ծերունի Ստարկէն:

—Դուք լմւ գիտէք ամրոցը, հարցը զօրապետ Տեմպեստան:

—Այս, ինչպէս չէ, ես այնտեղ երեք ամիս գերի էի:

—Ո՞վ է բերդի զօրապետը:

—Ալի փաշայի թռող:

—Տաճկաց ծովակալի թռող:

—Այն, օրինրդ:

—Ի՞նչպիսի կին է նա:

—Մի շատ գեղեցիկ ու ջահէլ աղջիկ է, բայց շատ էլ կրքոտ ու քմահաճ մի անձնաւութիւն է: Քրիստոնեայ գերիների հետ շատ վատ է վարւում, ուղղակի, կարելի է ասել՝ մարդու տեղ չի դնում: Ի՞նձ մի անգամ սաստիկ ծեծել տւեց, այնպէս որ ես հրաշքով կենդանի մնացի:

«Խեղճ լէ-Գիւսեր, ողբան ծանր է նրա վիճակը. մի այդպիսի վեհանձն ու ազատամէր մարդ...» մտածեց օրինրդը:

Յետոյ նա շարունակեց.

—Ի՞նչ էք կարծում, մեզ կ'յաջողւի՞ ամրոցը մտնել՝ իբրև տաճկական պատգամաւոր Մուլէյ-էլ-կադելի կողմից:

—Դա շատ վտանգաւոր է, օրինրդ. բացի այդ ամրոցը իր սեփական նաւը ունի, որ միշտ հսկում է ծովի կողմից:

—Ի՞նչ կայ որ. մենք կ'յարձակւենք ու կը գրաւենք այն: Զօրապետ Տեմպեստայի համար ոչ մի արգելք ու խոչընդուռ գոյութիւն չունի:

—Զօրապետ Տեմպեստայի համար. դուք ուրեմն, օրինրդ, զօրապետ Տեմպեստան էք:

Այս ասելով յոյնը բռնեց օրինրդի ձեռքը ու խորին ակնածութեամբ համբուրեց:

—Քեզ հետ մենք կրակից էլ չենք վախենայ, ասաց յոյնը, միայն հրամայիր, զօրապետ, և...

Նրանց խօսակցութիւնն ընդհատեց ծերունի Ստարկէն:

—Ինչ-որ մի բան է կատարւում, ասաց վերջինս. հեռաւոր հորիզոնի վրայ մի լոյս նկատեցի, որ մերթ անյայտանում էր, մերթ նորից երկում:

—Կարելի է դա Ալի փաշայի նաւերից մէկն է, խօսեց յոյնը և արագութեամբ մաղլցեց կայմի վրայ ու հայեացըն ուղղեց դէպի ծովի ընդարձակ տարածութիւնը:

—Հեռուում շատ պարզ կերպով մի նաւ է երևում, ասաց յոյնը:

—Երկի գալերա*) է:

—Ոչ, միմիայն շերեկա**), որի նաւախումբը երկի քսան մարդուց աւելի չի լինի կազմւած:

*) Գալերա—առագաստաւոր ու թիավար մարտանաւ, որը թիավարւում էր տաժանակիր աշխատանքի դատապարտած-ներով:

**) Շերեկա—կոչւում էին հին ժամանակի փոքրիկ նաւերը

— Իսկ ումը կարող է պատկանել:
— Ինարկէ տաճիկներին, այդ արդէն պարզ
երևում է:

Կարճ խորհրդակցութիւնից յետոյ որոշե-
ցին յարձակւել շերեկայի վրայ ու այն գերի
վերցնել:

— Ուրեմն մարենք մեր լոյսը, ասաց ծե-
րունի Ստարկէն ու գնաց հրաման տալու. իսկ
զօրապետ Տեմպեստան, սինեօր Պերալինիանօն,
Էլ՝ կադուրը և միւսները զինւած մնացին նաւի
ափին:

Տաճկական շերեկան իրան երկար սպասել
չը տւեց՝ մի կէս ժամից յետոյ արդէն բոլորո-
րովին մօտեցել էր:

— Դէհ... դէպի կոիւ... յառաջ, գոռաց զօ-
րապետ Տեմպեստան ու սուրը ձեռին թուաւ
թշնամու նաւի տախտակամածի վրայ:

Մթութեան մէջ սարսափելի իրարանցում
սկսեց:

Ինչպէս պարզեց, տաճիկները յարձակման
չէին սպասում, նրանք բոլորովին անպատճառ
էին: Պահապանը առաջին վայրկեանում իրան
բոլորովին կորցրեց, իսկ երբ ուշքի եկաւ, ար-
դէն կապկապւած ու գերւած էր. միւսները ա-
ւելի վատ դրութեան մէջ էին, այնպէս որ ընդ-
դիմադրութեան մասին խօսք անգամ չէր կա-
րող լինել:

Նրանք անձնատուր եղան:

Որոշեցին նրանց գերել, շերեկան կապել

գալիօտին ու թողնել յոյն նաւաստիների հսկո-
կութեան տակ:

Իսկ իրանք էլ մակոյկ նստան ու դիմեցին
դէպի ափը:

— Այժմ ճանապարհը բաց է, ասաց Նիկոլա
Ստրադիօտօն. առաւօտեան մենք ամրոցումը կը
լինենք:

Եւ իսկապէս՝ դեռ արել նոր էր ծագել, երբ
մակոյկը մտաւ Հուսսիֆ ամրոցի նաւահանգիստը:

VI

ՀՈՒՍՍԻՖ ԱՄՐՈՑՈՒՄ

Եօտ տասը ըոպէ կիրճի մէջ քայլելուց յե-
տոյ մեր ճանապարհորդների առաջ մի բարձրա-
բերձ ու ահոելի ամրոց բացւեց:

Դա Հուսսիֆ ամրոցն էր *):

Պահապաններ բոլորովին չէին երևում,
կարծես թէ նրանք միանգամայն ապահով էին:

Բայց երբ մեր ճանապարհորդները մօտե-
ցան բերդին, նրա աշտարակների մէկից լսւեց.

— Ո՞վ է:

*) Հուսսիֆ ամրոցը գտնուում էր Կիպրոս կղզու արևելեան
մասում, կառուցւած ապառաժի վրայ՝ անտաշ ու ամուր քա-
րերից: Երկար տարիներ նա պաշտպանում էր ծովափը՝ եղիպ-
տական ու տաճկական ծովանէնների դէմ, իսկ 1570 թուականին
ուժեղ դիմադրութիւն ցոյց տալով տաճկական զօրքերին, չը դի-
մացաւ ու ընկաւ: Սուլթան Սելիմ Արդը վերանորոգել տւեց
այն ու իշխանութիւնը յանձնեց իւր սիրելի ծավակալ Ալի փա-
շայի թոռանը՝ Գարաջիային:

— Մերոնք են, պատասխանեց Նիկոլան տաճկերէն. Նա լաւ տիրապետում էր բոլոր արևելեան լեզուներին:

— Ո՞րտեղից էք գալիս, հարցրեց ենիչարիների զօրապետը, աշտարակից ցած իջնելով ու դիմաւորելով նրանց:

— Ֆամագոստայից:

— Ի՞նչ էք ուզում:

— Մեզ հրամայւած է ուղեկցել Մեդինայի փաշայի որդի՝ զօրապետ Համիդին:

— Ո՞րտեղ է նա:

— Այստեղ է, առաջ գալով պատասխանեց զօրապետ Տեմպեստան արաբերէն:

— Իմ տիրուհիս՝ Ալի փաշայի թոռը, բաղդաւոր կը համարէ իրան՝ քեզ հիւրնկալելու։ Հետեցէք ինձ, էֆֆենդը՝

— Իսկ կարող եմ իմ սպասաւորներիս էլ հետս ներս բերել:

— Եթէ նրանք տաճկիներ են:

— Բոլորն էլ տաճկահպատակներ են:

— Այն ժամանակ նրանք մեզ մօտ անկեղծ ու սրտագին հիւրասիրութիւն կը գտնեն:

Նա հրամայեց ենիչարիներին հեռանալ. և եկողներին հրաւիրեց բերդի՝ այսպէս կոչւած՝ «պատւառը բակը», որը շքեղ զարդարւած էր արաբական ճաշակով։

Այստեղ խնդրելով զօրապետին հանգստանալ՝ նա հրամայեց սուրճ բերել:

Օրիորդը, լաւ գիտենալով տեղական սովո-

րութիւնները, խմեց սուրճը, կերաւ մի քանի կարկանդակ ու դիմեց զօրապետին.

— Իսկ ուր է Ալի փաշայի թոռը... երես քնած է դեռ:

— Ոչ, իմ տիրուհիս շատ վաղ է վեր կենում, նոյն իսկ զինւորներից էլ վաղ։ Նա այսօր գնաց տեսնելու ըրիստոնեայ գերիներին, որոնք ուղարկւած են տզրուկ բռնելու։ Շատ մեծ կարիք է զգացւում ֆամագոստան պաշարող հիւանդ զինւորների համար։

— Իսկ դուք շատ գերիներ ունեք։

— Քսանից աւելի:

— Արդեօք նրանց մէջը չըկայ Փրանսիացի ազնւական կոմս լէ-Գիւսեր անունով մի մարդ։

— Լէ-Գիւսեր, — կրկնեց տաճիկը մտաբերել ուզելով։ Կայ, ինչպէս չէ, նա էլ ուղարկւած է տզրուկ բռնելու։

Օրիորդը բարկութիւնից ու սարսափից հազիւ զսպեց իրան։ Մի քիչ հանգստանալով նա ասաց.

— Ահա այդ ազնւականի համար եմ եկել։

— Դու ուզում ես նրան ազատել։

— Ինձ յանձնարարել են յետ տանել նրան ֆամագոստա։

— Ո՞վ է քեզ այդպիսի յանձնարարութիւն տւել։

— Մուլէյ-էլ-կաղելը։

— Ի՞նչ, մեր սիրելի Մուլէյ-էլ-կաղելը, ուրախ բացականչեց ենիչարիների զօրապետը, ապա քիչ մտածելուց յետոյ աւելացրեց։

— Եթէ դու ուզում ես, ես քեզ կը տանեմ տղրուկ բռնելու տեղը, ուր դու հնարաւորութիւն կունենաս տեսնել թէ տիրուհուս և թէ այդ գերուն:

— Լաւ, ես պատրաստ եմ, գնանք:

— Մի ըոպէից յետոյ թամբած ձիելը այստեղ կը լինին, ասաց տաճիկը:

Եւ իրաւ, հազիւ մի երկու ըոպէ անցած սպասաւորը ներս բերեց գեղեցիկ նժոյգները:

— Մենք պատրաստ ենք, էֆֆենդը՝մ, ասաց տաճիկը, մօտենալով օրիորդին. ես արդէն մարդ ուղարկեցի տեղեկացնելու քո գալուստը: Գարածիան շատ գոհ կը լինի տեսնել Մուլէյ-էլ-Կադելի պատգամաւորին:

— Միթէ նա անձամբ ճանաչում է Մուլէյ-էլ-Կադելին:

Տաճիկը խորհրդաւոր ժպտաց:

— Դու հարցնում ես թէ ճանաչում է: Ոչ միայն ճանաչում է, այլ նրա պատճառով օրէցօր հալում ու մաշւում է:

— Ահ, ուրեմն տիրուհիդ նրան սիրում է:

— Կարծես թէ:

— Իսկ նա:

— Այնքան էլ շատ չի հետաքրքրւում.

— Ահա թէ ինչ, յանկարծ դուրս թռաւ օրիորդի բերանից. բայց բարեբախտաբար տաճկի ուշադրութիւնից վրիպեց այդ:

Քիչ յետոյ ձիաւորները հասան մի ինչոք գիւղ, ուր հրապարակի մէջ տեղը մի գեղեցիկ

վարդագոյն վրան էր զարկւած, որի չորս կողմը ենիշարիները կարգով շարւել էին:

— Համեցէք այստեղ, էֆֆենդը, տիրուհիս քեզ սպասում է, դիմեց տաճիկը Տեմպեստային:

Վրանի դուն մօտ կանգնած յաղթանդամ արաբները յետ քաշւեցին ու զօրապետ Տեմպեստան, ներս մտնելով, խոնարհ բարև տեղ թախտի վրայ նստած Գարածիային:

Որքան գեղեցիկ երիտասարդ է, բացականչեց Գարածիան, չը կարողանալով զսպել իրան և անմիջապէս լուրջ կերպարանք ընդունելով հաջըրեց արաբերէն:

— Ի՞նչ ես ուզում:

— Ես իսկոյն կասեմ քեզ, տիրուհի:

— Իսկ ով ես դու:

— Ես Մեդինայի փաշայի որդին եմ՝ Մուլէյ-էլ-Կադելից ուղարկւած պատգամաւոր:

— Ի՞նչ է ուզում նա ինձանից:

— Ես եկել եմ խնդրելու նրա անունից, որ դու քո քրիստոնեայ գերիներից մէկին տաս նրան:

— Քրիստոնեայ գերիներից մէկին, զարմանքով հարցըրեց Ալի փաշայի թոռը: Բայց մրին:

— Կոմս Գաստոն լէ-Գիւսերին, համարձակ պատասխանեց զօրապետ Տեմպեստան:

— Դա երկի այն ֆրանկն է, որին մենք Նիկողիայում գերի վերցրինք. բայց ինչ է անելու նրան մեր յարգելի Մուլէյ-էլ-Կադելը:

— Ճիշտն ասած, ես էլ չը գիտեմ... եթէ

չեմ սխալւում, նրան յանձնարարութեամբ ուղարկելու են վենետիկ:

— Բայց ում հրամանով:

— Կարծեմ, մեծ վեզիր Մուստաֆայի:

— Միթէ մեծ վեզիրը չը գիտէ, որ այդ գերիները իմն են, և նա իրաւունք չունի որևէ կարգադրութիւն անելու նրանց մասին:

— Ի հարկէ գիտէ, բայց չէ որ նա բոլոր զօրքի հրամանատարն է, և ես պարտքս եմ համարում յիշեցնել քեզ, որ նրան շատ յարգում ու սիրում է ինքը մեծ սուլթանը:

— Իսկ ինձ ինչ:

— Ուրեմն դու հրաժարում ես յանձել ինձ այդ երիտասարդին:

Պատասխանի փոխարէն թրքուհին կանչեց սպասաւորին ու հարցըեց:

— Ինչով կարող ես հիւրասիրել պարոնին:

— Բացի մածունից ոչինչ չըկայ:

— Այս դու անիրաւ... ոչինչ չես պահում... Դէ, ինչ արած, քեզ մածունը, Տեսնում ես, շարունակեց նա, դիմելով զօրապետ Տեմպեստային, այստեղ ուրիշ ոչ մի բանով չեմ կարող քեզ հիւրասիրել, իսկ այնտեղ, ամրոցում, ես քեզ, իմ սիրելի ասպետ, այնպէս կը պահեմ, որ դու ինքդ չես ցանկանալ հեռանալ: Յետոյ նա սկսեց հարց ու փորձը.

— Իսկ ի՞նչ է անում Մուլէյ-էլ-կադելը:

— Հանգստանում է ու կագգուրում ստացած վէրքից:

— Ի՞նչ... միթէ նա վիրաւորւած էր... Էրբ:

— Մենամարտութեան մէջ նրան վիրաւորեց մի քրիստոնեայ ասպետ:

— Ուղղակի գարմանալի է... Ի՞նչպէս կարող էր պատահել այդ: Մուլէյ-էլ-կադելը կուռում անյաղթելի է... իսկ դու... շարունակեց թրքուհին, իմ սիրելի ասպետ, ինչպէս տեսնում եմ, դու նոյնալի հերոս ես երեւմ:

Օրիորդը կարմրեց և առաջին ըռպէն չը գիտէր, թէ ինչ պատասխանէ, բայց յետոյ խըռիտաբար ասաց:

— Եթէ քո ամրոցում կան անյաղթելի ասպետներ, թող դուրս գան մենամարտութեան, ես կարող եմ միաժամանակ երկուսի հետ էլ կուել:

— Լաւ, ես կը հարցնեմ Մետիւբին, կարելի է նա համաձայնի քեզ հետ կուել. նա նոյնալի է նրանից լաւ կուռղ է միայն Մուլէյ-էլ-կադելը:

— Ես, տիրուհի, կաշխատեմ գործով ապացուցել իմ զէնքի ոյժը:

Գարաջիան նայում էր զարմացած:

«Որքան գեղեցիկ է, այնքան էլ քաջ. հետաքրքրական է՝ ինչն է նրա մէջ գերակշռում՝ քաջութիւնը, թէ գեղեցկութիւնը. մենք այդ գեռ կը տեսնենք», մտածում էր նա:

Այդ ըռպէին ծառաները ներս բերին մածունը՝ շքեղ, արծաթեայ մատուցարանի վրայ դրած:

— Խնդրեմ, էֆֆենդը՝ մ, առայժմ սրանով
բաւականացիր. ես ուզում եմ, որ դու մի քանի
օր այստեղ մնաս. քո ընկերութիւնը ինձ շատ
հաճելի է:

— Իսկ Մուլէյ-էլ-Կադելը:

— Ոչինչ, նա կը սպասէ:

Երբ օրիորդը մածունը կերաւ վերջացրեց,
Գարաջիան տեղից վեր կենալով ասաց.

— Հիմա մենք կարող ենք գնալ ամրոց,
այնտեղ աւելի լաւ է, քան թէ այս անպիտան
ճահիճում: Հա, ես մոռացայ հարցնել քո անունը:

— Համիդ-Էլէօնորա:

— Տարօրինակ է՝ է-լ-է-օ-ն-ո-ր-ա...

Նրանք դուրս եկան վրանից, հեծան արդէն
վաղուց պատրաստած նժոյգները ու արագ
սլացան դէպի ամրոց:

Ամրոցի բակում զօրապետ Տեմպեստան
ուզեց օքնել Գարաջիային ձիուց իջնելու, բայց
նա մերժեց ասելով:

— Ես ձի հեծնել ու իջնել կարող եմ առանց
ուրիշի օքնութեան:

Ապա նա շարունակեց.

— Խնդրում եմ, սիրելի ասպետ, ամրոցումս
զգան ինչպէս քո տանը. քո ամեն մի ցանկու-
թիւնը ինձ համար օրէնք է, չնայելով որ ես սովոր
չեմ հրամաններ լսելու:

Նրանք մտան ամրոցի փառաւոր ու շքեղ
զարդարւած դահլիճը:

Գարաջիան նստեց թախտի վրայ և Համի-
դին էլ հրաւիրեց նստել իրա կողքին:

Ծառաները սեղանը պատրաստեցին և մա-
տուցին զանազան կերակուրներ ու ըմպելիքներ:
Նրանք նստեցին ճաշելու:

Եղբ ճաշը վերջացաւ, Գարաջիան հրամայեց
կանչել Մետիւրին:

— Ինչով կարող եմ քեզ ծառայել, հարցրեց
նա ներս մտնելով:

— Ես տիսուր եմ, կը ցանկանայի մի քիչ
զւարճանալ:

— Արդեօք կը հրամայեմ մակոյկ պատրաս-
տել ծովային զբօսանքի համար:

— Ոչ, մակոյկը ինձ գւարճութիւն չի պատ-
ճառում:

— Բայց գուցէ կը ցանկանաք հնդկական
ըմբշամմրտը տեսնել:

— Ոչ, այն էլ վաղուց ձանձրացրել է ինձ:

— Ուրիշ բան չեմ կարող հնարել, տիրուհի:

— Ես կը ցանկանայի համոզւել, որ դու իս-
կապէս Հուսսիֆի առաջին քաջն ես:

— Ուրախութեամբ, տիրուհի. ես այդ կապա-
ցուցանեմ, բայց ուր է ինձ հաւասար հակառա-
կորդը. ոչոք չի դուրս գալիս:

— Քեզ հաւասար հակառակորդ ես ճարել եմ:
Ահա նա, ասաց Գարաջիան, ցոյց տալով զօրա-
պետ Տեմպեստայի վրայ:

— Այդ երեխան... և դու ինձ համարում ես
դրան հաւասար... դու ծիծաղում ես ինձ ձվայ,
տիրուհի, կամ կուցէ այս երիտասարդի մահն
ես ցանկանում. չը մոռանաս, որ նա յայններ

մարդու որդի է. նրա պատճառով կարող եմ շատ անախորժութիւնների, հանդիպել:

— Ես քեզանից խորհուրդ չեմ հարցնում, Մետիւբ; ասաց զայրացած Գարաջիան. ուզում ես մենամարտել թէ ոչ:

— Լաւ, թող ես երեխայ լինիմ, — ասաց բարկացած օրիորդը. բայց, զօրապետ, ես գործով իսկոյն ցոյց կը տամ, թէ ինչպիսի երեխայ եմ:

Մետիւբը յիշեց, որ գործ ունի Մեդինայի փաշայի որդու հետ, ուստի լուց:

— Ես պատրաստ եմ, տիրուհի, ասաց նա:

— Ուրեմն սկսենք, նկատեց օրիորդը:

Եւ երկու ասպետները իրար դէմ դուրս եկան:

Զօրապետ Տեմպեստան գեղեցիկ շարժումնեւ հեռացրեց իր սուրը, այնպէս որ ամբողջ կուրծքը բաց էր հարւածի համար:

— Դու շատ վստահ ես, էֆֆենդը՝ մ, և չիմանալով դիմացինիդ ոյժը, այդպիսի վտանգաւոր խաղեր ես. անում:

— Դուք մի անհանգստանաք իմ մասին, նրկատեց զօրապետ Տեմպեստան, և հակառակորդի շարժումը նկատելով արագութեամբ կռացաւ, և հարւածը վրիպեց... իսկ ինքը արագութեամբ իր սրի ծայրը միեց Մետիւբի կուրծքը:

— Առայժմ այսչափ, հանդարտ ասաց զօրապետ Տեմպեստան:

Տաճիկը գոռում էր ոչ այնքան ցաւից, որքան ամօթից:

— Սպանիր ինձ, ինդրում էր նա զօրապետ Տեմպեստային. մինչոյն է, այսուհետեւ այլկս ինձ համար ամօթ է ապրելը, ասում էր նա:

— Ես սովոր չեմ անգէն մարդկանց սպանելու, ասաց զօրապետ Տեմպեստան:

Գարաջիան հիացած նայում էր Տեմպեստային: «Քաջ, վեհ ու գեղեցիկ է այս երիտասարդը. Մուլէյ-էլ-կաղելից աւելի բարձրէ սա», մտածեց նա և ապա դիմելով Մետիւբին ասաց.

— Դէ, գնա բժշկուիր, Մետիւբ, և միւս անգամ այդքան էլ վստահ մի-լինիր ոյժիդ վրայ:

Եւ երբ Մետիւբը հեռացաւ, նա արագութեամբ դարձաւ օրիորդին:

— Արդեօք դու չէիր վախենալ Մուլէյ-էլ-կաղելի հետ մենամարտութեան դուրս գալու:

— Բոլորովին ոչ:

— Նա քո մտերիմ բարեկամն է, այնպէս չէ:

— Այն, ամենամտերիմը՝ իմ բարեկամներից:

— Բայց չէ որ լինում են այնպիսի հանգամանքներ, երբ նոյն իսկ ամենամտերիմները իրար դէմ սուր են բարձրացնում:

— Ես քեզ չեմ հասկանում, տիրուհի:

— Խնդրում եմ, ինձ Գարաջիա կանչիր:

— Լաւ, ես քեզ չեմ հասկանում, Գարաջիա:

— Հսկիր՝ ու կը հասկանաս:

Յանկարծ նա վեր թռաւ տեղից, բարձրացրեց վառվուն աչքերը լի ատելութեամբ ու կրակով, կտրեց վզից կախւած թանկագին մարգարտեայ մանեակը ու լոռու ձայնով ասաց.

—Ա՛խ, որքան գեղեցիկ էր նա... Առաջին անգամ ես նրան տեսայ գեռ ջահէլ հասակում... Նա բոլորովին գեռ երեխայ էր... Նրան օգնութեան էին ուղարկել մեր նաւատորմին: Նա կարծես ինքը կուի աստածը լինէր: Նրա համար ոչ մի արգելք գոյութիւն չունէր. անվախ ու հանգիստ նրա արիւնոտ սուրը պապում էր կուողների առաջին շարքում, ուր տագնապը նաստիկ էր և մահը՝ անխուսափելի: Նա կարծես թէ արհամարհում էր մահը, և աներկիւդ դիմաւորում նրան:

Ահա այդ օրւանից ես նրան սիրեցի, սիրեցի խելագարի պէս՝ մոռանալով ամեն բան. իսկ ինքը... ո՞հ... նա նոյն իսկ չէր ուզում նայել ինձ վրայ: Ես նրա աչքում ոչինչ չարժէի, ես՝ Գարաջիան՝ Ալի փաշայի թռոր... Ոհ... ինչպիսի խայտառակութիւն... և այդ խայտառակութիւնը միայն արեան գնով կարելի է լուանալ...

Թրքուհու աչքերը լցւեցին արցունքով, և նա, ընկնելով օրիորդի կրծքին, լաց էր լինում հեկեկալով:

—Գարաջիա, անաց օրիորդը. ով էր այդ երեկի ասպետը, որ հրաժարւեց քո սիրուց:

—Ո՞վ, բացականչեց Գարաջիան. երբ դու համաձայնես նրան սպանել, այն ժամանակ կասեմ:

—Բայց ով է, վերջապէս:

—Նա:

—Բայց ով է նա. շատ անորոշ է անաժդ:

Գարաջիան մի քիչ հանգստացաւ, նստեց էլէօնորայի կողքին և գողղոջուն ձայնով շարունակեց.

—Նա, ով յաղթեց Մետիւրին...

—Ես գարծեալ չեմ կարողանում հասկանալ, թէ ում մասին է խօսքդ:

—Համիդ, դու եկել ես տանելու քրիստոնեային:

—Իհարկէ:

—Լաւ, նրան քեզ կը տամ, բայց երկու պայմանով:

—Ասա, տիրունի:

—Առաջինը՝ որ դու մենամարտութեան գուրս գաս Մուկէյ-էլ-Կադելի դէմ, և կուի մէջ սպանես նրան...

—Դու ցանկանում ես, որ ես սպանեմ Մուկէյ-էլ-Կադելին, սարսափած բացականչեց օրինութը:

—Դու նրանից վախենում ես, էֆֆենդը՝ մ:

—Ես ոչոքից և ոչնչից չեմ վախենում, պատասխանեց Տեմպեստան:

—Իսկ եթէ չես վախենում, սպանիր նրան:

—Բայց ինչու համար, ոչ մի պատճառ չը կայ, առարկեց Տեմպեստան:

—Տարօրինակ հաց. եթէ ուզենաս՝ դու միշտ մի որևէ պատճառ կարող ես գտնել: Դուք, պղամարդիկն և մանաւանդ զինւորներդ միշտ յարմար առիթ կառող էք ունենալ:

—Ես շատ եմ պարտական Սուլէյ-Էլ-Կադիլին և իմ երախտիքսինձ...:

— Հայր։ հայրս ու ես ընդհանրապէս չենք
հասկանում, թէ ինչ բան է երախտիքը. դա թու-
լամորթների ստեղծած մի առարկութիւն է...
Եթէ դու նրան փող ես պարտ ես կը վճարեմ,
դրա մասին մի մտածիր անգամ։

—Աշխարհիս բոլոր հարստութիւնը չի կարող փոխարինել այն զգացմունքներին, որ ես տածում եմ դէպի նա:

—Այդ բոլորը ինձ համար միենոյն է։ Եթէ համաձայն ես պայմանիս՝ գերին արդէն քոնն է, իսկ եթէ ոչ դու ազատ ես այս լուսէից... Չու կի՞ երկուսից մէկը։

— Իսկ ի՞նչ է քո երկրորդ պայմանը, հարցրեց
Տեմպետան:

—Երբ այդ քրիստոնեային հասցնես Թամագոստա, իսկոյն և եթ վերադառնաս ինձ մօտ:

—Թոյլ տուր մի բոպէ մտածելու։
Եւ դքսուհին իբրև թէ խորասուզւեց իր
մտքերի մէջ։ Մի քիչ յետոյ Գարաջիան հար-
յընեց։

— Դէհ, որոշեցիք:

—Այս, ընդունում եմ պայմանդ:

— Աւրեմ զու կը վերադառնա:

— Ըստ, սրբ աղասես Սուլէյ-Ֆլ-Կադմիլս,
— Ուրեմն, վառը արա օտքեան թերին այս-

տեղ կլինի քո տրամադրութեան տակ. խսկոյն եւ
մարդ կուղարկեմ նրան այստեղ բերելու:

Գարաջիան արագ-արագ ման էր գալիս
դահլիճի մէջ։ Հիմա սիրելի Համիդ, գնա հանգստա-
ցիր։ Գարաջիան պատին մօտենալով, փոքրիկ
մուրճով խփեց այնտեղ կախւած արծաթեալ
տախտակին։

Ներս՝ մտաւ սպասաւորը՝

—Ուղեկցեցէք պարոնին իրա սենեակը, հրամայեց նա. բարի գիշեր, Համբիդ:

Օրիորդը, երբ միայնակ մնաց իրա սենեա-
կում, առանց հանուելու, ընկաւ անկողնի վրայ
ու խոր քուն մտաւ:

Առաւօտեան նոր էր վեր կացել, երբ ներս
մտաւ սպասաւորը:

—Տիրուհիս քեզ սպասում է, —ասաց նա խոնարհ գլուխ տալով:

— Լաւ, գնանք. բայց ես առաջ ուզում եմ
տեսնել սպասաւորներին. սպասիր ինձ այստեղ:

ՕՐԻՆՈՂԸ դուրս եկաւ պալատից; անցաւ
բակը ու մտաւ վրանը, որտեղ տեղաւորւել էին
նրա ինկերներք:

—Արդեօք մարդ ուղարկեցի՞ք, որ ջըասոյց ա-
նեն մեր գերած նաւր, հարցրեց նա բարևելով:

—Այս, օրիորդ, պատասխանեց Նիկոլա
Ստոպանիոսն:

—Մեր գործը շատ աջող է գնում, քեզիի
մի երկու ժամանեց յետոյ կոմս լէ-Գիւսերի հետ

— Բայց չեք վախենում, օրիորդ, որ կոմսը մեզ հանդիպելիս որևիցէ կերպով ցոյց տայ իր ուրախութիւնը, չիմանալով թէ բանն ինչումն է, և այդպիսով ամբողջ գործը վերջին բոպէին փրչացնէ, հարցրեց սիսեօր Պերպինիանօն:

— Իսկապէս այդ մասին բոլորովին չէի մըտածել, Դա շատ լուրջ հարց է. իսկ ի՞նչպէս անենք:

— Ես այդ ինձ վրայ եմ վերցնում, ասաց Նիկոլա Ստրադիօտօն. բոլորն էլ գիտեն, որ ես քո սպասաւորն եմ, ուստի յարմար պատճառ կը հնարեմ կոմսի հետ տեսակցութիւն ունենալու և նրան ամեն ինչ կը բացատրեմ:

— Դէ ես գնում եմ, ասաց օրիորդը, դուքս գալով վրանից:

— Քրիստոնեային արդէն բերել են, դիմաւորեց նրան Գարաջիան. եկ, իմ սիրելի ասպետ, նստիր այստեղ, ասաց նա, իր կողքին թախտի վրայ տեղ ցոյց տալով. մի քանի ժամից յետոյ մենք բաժանւելու ենք, այնպէս չէ:

— Այո, Գարաջիա, բայց ոչ երկար ժամանակով:

Մի ժամից յետոյ բերդի հրապարակի վրայ կարգով շարւել էին երկու խումբ զինւորներ. առաջինը՝ սիսեօր Պերպինիանօն, էլ՝ Կադուրը, Նիկոլա Ստրադիօտօն, Միմէօնը և երկու յոյն նաւաստիները, իսկ երկրորդը՝ Գարաջիայի ենիշարիները, իրանց գլուխ ունենալով անյաղթ Մետիւրին: Նրանից մի քիչ հեռու, ձիու վրայ նստած

կոմս լէ-Գիւսերը իրա բաղդի որոշմանն էր սպասում, երկու արաբների հսկողութեան տակ:

Բոլորը անհամբեր սպասում էին Գարաջիայի և Համբիդի գուրս գալուն:

Սակայն, նրանք էլ իրանց երկար սպասել չը տւին:

Մի քիչ յետոյ Գարաջիան դքսուհու հետ գուրս եկաւ պալատից: Զօրքը ուրախ ողջունեց նրանց:

— Դէ, բարի ճանապարհ. ահա քեզ ուզածդ քրիստոնեան, ասաց Գարաջիան, ցոյց տալով կոմս-լէ-Գիւսերի վրայ:

Օրիորդը երեսը դարձրեց դէպի իր սիրեցեալ փեսան ու հազիւ կարողացաւ զսպել իրան:

«Աստուած իմ, որքան նա փոխւել, մաշւել ու քայլայւել է», մտածեց Տեմպեստան:

Սակայն, երբ նրանց հայեացքները միմեանց հանդիպեցին, կոմսը զսպեց իր յուզմունքը և մնաց հանգիստ ու սառնասիրու:

— Ծնորհակալութիւն, ասաց օրիորդը Գարաջիային. ես կը հասցնեմ այս քրիստոնեային ֆամագոստա, կը մենամարտեմ Մուլէյ-էլ՝ Կադելի հետ, կը սպանեմ նրան և անյապաղ կը վերադառնամ Հուսսիֆ: Իսկ այժմ մնաս բարով, իմ սիրելի Գարաջիա:

Թըրուհին ցանկութիւն յայտնեց ճանապարհ գնել նրանց մինչև ծովի ափը:

Նրանք նստան առաջուց պատրաստուած նժոյգները ու արագութեամբ քշեցին դէպի նաւահանգիստ:

Նաւը վաղուց արդէն հեռացել ու անյայ-
տացել էր հորիզոնի ետևը, իսկ Գարաջիան յու-
սալի հայեացքով դեռ անշարժ կանգնած ճա-
նապարհ էր ձգում նրան։ Յանկարծ նա ուժգին
մտրակեց ձիուն ու խելագարի նման քշեց դէպի
ամբոցը։

Հազիւ ճանապարհի կէսը անցել էր, երբ
մի անծանօթ ենիչար ձիաւոր նրա առաջը
կտրեց։

—Արդեօք ես բաղդ ունիմ խօսելու մեծ ու
հոչակաւոր Ալի փաշայի գեղեցկուհի թոռան հետ,
հարցրեց անծանօթ զինուրը։

—Այո, շտապ պատասխանեց նրան Գարա-
ջիան։ Ես Ալի փաշայի թոռն եմ, ի՞նչ ես ու-
զում։

—Որքան ուրախ եմ. ես կարծում էի, թէ
ամբոցում քեզ չեմ կարող հանդիպել։ Ար-
դեօք քրիստոնեաները դեռ այստեղ են...

—Ի՞նչ քրիստոնեաներ..

—Նրանք, որոնք եկել էին կոմս-է-Գիւսե-
րին տանելու։

—Միթէ նրանք քրիստոնեաներ էին, գոռաց
Գարաջիան, միանգամայն իրան կորցնելով։—
իսկ դու ո՞վ ես...

—Երբ դեռ քրիստոնեայ էի, ինձ զօրապետ
կաշինսկի էին կանչում, իսկ այժմ ես կրում
եմ մահմեղական անուն՝ իւսուֆ. Համմադա, որը
հազիւ թէ քեզ յայտնի լինի։ Ես...

—Լաւ, նորից կտրեց շատախօս զօրապե-

տին Գարաջիան։ ուրեմն նրանք ինձ խաբեցին...
ուրեմն չամիղը...

—Նրա անունը չամիդ չէ, այլ զօրապետ
Տեմպեստա...

—Ի՞նչ... այդ ասպետը զօրապետ Տեմպես-
տան էր...

—Ոչ թէ ասպետը, այլ ասպետուհին, որով-
հետև նրա կեղծ անունն է զօրապետ Տեմպես-
տա, իրօք նա դուքս դ'Երովլի դուստրն է...

—Ո՞հ... ես բոլորովին խայտառակւեցայ... ինձ
այսպէս յիմարաբար խաբեցին... Մետիւք, գո-
ռաց Գարաջիան. շուտ գնա նրա յետելից. որտեղ
էլ որ լինի, որտեղից էլ որ ուզում ես, գտիր
բեր նրան... լսում ես. առանց Համիդին յետ չը
դաս, բայց անպատճառ կենդանի լինի. ես ու-
զում եմ կենդանի տեսնել նրան։

Ա Ն Հ Ա Ի Ա Ս Ա Ր Կ Ռ Ի Ի

Կղզին իր վեհ ամբոցով արդէն բոլորովին
կորել էր տարածութեան մէջ։

Նաւը արագութեամբ առաջ էր ընթանում։
Նրա աախտակամածի վրայ կանգնած էր զօրա-
պետ Տեմպեստան լէ-Գիւսերի հետ. նրանք մեղմ
խօսում էին. չէ՞ որ այնքան ասելու ու խօսելու
բաներ ունէին։

Այդ միջոցին նըանց մօտեցաւ Նիկոլա
Ստրադիօտօն:

— Զօրապետ, ասաց նա. հեռւում մի ինչ-որ
նաւ է երևում. շատ հաւանական է, որ տաճիկ-
ները մեզ հետամուտ են լինում... Կոխուր ան-
խուսափելի է...

Կոմսը սաստիկ գունատեց, սակայն, վայր-
կենաբար զապելով իրան, բարձրաձայն կանչեց.
— Ի զէ՞ն, ի զէ՞ն...

Մի քանի րոպէից յետոյ, նաւը միանդամայն
պատրաստ, զինւած սպասում էր թշնամու մօ-
տենալուն:

Ամենքը բաջութեամբ կատարում էին իրանց
պարտականութիւնը:

Ծերունի Ստրակէն, Նիկոլա Ստրադիօտօն
նաւն էին ղեկավարում. զօրապետ Տեմպեստան,
կոմսը, սինեօր Պերպինիանօն, էլ-Կադուրը սուրը
ձեռներին կանգնած էին կուողների առաջին
շարքում:

Յանկարծ զօրապետ Տեմպեստային մօտե-
ցաւ մի ինչ-որ արար:

— Միթէ տիրուհին արդէն մոռացաւ, որ իմ
պարոնը յանձնարարել էր ինձ դժւար ըռպէնե-
րում օգնել քեզ:

Դքսուհին բարձրացրեց գլուխը ու տե-
սաւ իր առաջ կանգնած Բէն-Ցակէլին Մ—ուլէյ-էլ-
Կադելի հաւատարիմ սպասաւորին:

— Ի՞նչ ես ուզում, հարցրեց օրիորդը:
— Իմ տէրը հրամայեց ինձ իսկոյն և եթ

իմաց տալ իրան, եթէ քեզ մի որեկցէ վտանդ
սպառնայ...

— Բայց ի՞նչ ես ուզում անել դու:
— Լողալով հասնել մինչեւ ափի:
— Բայց չէ որ ափը սաստիկ հեռու է, և
հազիւ թէ կարողանաս հասնել:

— Բէն Տաէլը լաւ լողորդ է, նրա համար
գոյութիւն չունի ոչ տարածութիւն և ոչ
արգելք:

Եւ նա վերջացնելով այս խօսքերը արագու-
թեամբ իրան նետեց ջուրը:

Իսկ մի քանի վայրկեանից յետոյ նրա ու
գլուխը մի քանի անգամ երևալուց յետոյ կորաւ
ալիքների մէջ:

Այդ միջոցին տաճկական նաւից, որ արդէն
բոլորովին մօտեցել էր, որոտաց առաջին թըն-
դանօթը, ու տախտակամածի յատակը փշրւեց.
Դրան հետեւց երկրորդը, երրորդը ու այդպէս
անվերջ...

Կռուի տագնապը ուժգին էր... Քրիստոնեա-
ներն էլ յետ չը մնացին, ամեն մի հարւածին
նրանք էլ պատասխանեցին հարւածով: Զօրապետ
Տեմպեստան ու կոմս լէ-Գիւսերը թէ օրի-
նակով և թէ խօսքով խրախուսում էին բոլոր
կռողներին:

— Պատրաստւեցէք, գոռաց կոմսը, թշնամին
ուզում է մեզ ոչնչացնել...

Նա դեռ չէր վերջացրել իր խօսքը, երբ մի

գնդակ դիպաւ նրա կըծքին: Նա վէրքը բռնելով
վայր գլորուեց գետին:

— Դաստին, իմ սիրելի Գաստին, բացական-
չեց օրիորդը կորցնելով իրան ու չոքեց իր սի-
րելի փեսայի առաջ:

Ել Կադուրը ու մի յոյն զինւոր զգուշու-
թեամբ բարձրացնելով վիրաւորին տարան ներս:

— Ոչինչ... դատարկ բան է... շուտով կան-
ցնի, հազիւ կարողանում էր արտասանել կոմսը.
գնդակը դիպաւ կըծքիս... բայց վտանգ չկայ...

— Ոհ, անիծեալներ, դուք նրան սպանեցիք,
դուաց օրիորդը բարձրացնելով կոմսի ձեռից
ընկած սուրը:

— Ինձ մօտ եկէք, սիրելի ընկերներ, վրէժ
առնենք այդ անիրաւներից... դէհ յառաջ...

Սակայն, արդէն ամեն բան վերջացած էր:
Շատերը մեռած, ընկած էին, միւսները վիրա-
ւոր, մնացածներն էլ գերի էին բռնւած:

Տեսնելով, որ իր կոչին պատասխան տւող
չկայ, օրիորդը դէն գցեց իր սուրը:
— Բռնեցէք ինձ, ինչ ուզում էք արէք ինձ
հետ, ես ձեր գերին եմ, ասաց նա յուսահատ-
ւած:

Նրան մօտեցաւ Մետիւբը:

— Օքինրդ, ասաց նա, ինձ հրամայւած է
քեզ ձեռք չը տալ, ես միայն քեզ պիտի տեղա-
փոխեմ իմ նաւը:

Նա հրամայեց նոյնն անել և մնացած գերե-
ների հետ:

Մետիւբը օրիորդի հետ քաղաքավարի էր
վարւում: Նա նրան առաջարկեց իր բաժանմուն-
քը, իսկ ինքը տեղափոխւեց զինւորների մասը:
Հազիւ օրիորդը մնաց մենակ, փակւած իր
կայիւտում (նաւասենեակում), երբ դուռը բացւեց
ու ներս մտաւ զօրապետ Լաշչինսկին:

— Ներողութիւն, օրիորդ, որ ես խանգա-
րեցի ձեր հանգիստը, ասաց նա ժպիտը երեսին,
բայց ես ձեզ մի շատ կարեոր ասելիք ունեմ:

— Այդ դժւըք էք, սինեօր Լաշչինսկի, ասաց
զայրացած օրիորդը, ի՞նչ էք ուզում:

— Արդեօք դուք զիտէք, թէ ի՞նչ է սպա-
սում ձեզ, հարցըց Լաշչինսկին:

— Ի հարկէ, կամ մահ, կամ տանջանքներ:

— Իսկ զիտէք թէ Մետիւբը ձեզ ուր է տա-
նում:

— Ի հարկէ զիտեմ. Հուսսիֆ ամրոցը, Գարա-
ջիայի մօտ. բայց ասացէք ինորեմ, ի՞նչ էք ու-
զում դուք ինձանից, վերջապէս ինձ հանգիստ
էք թողնելու թէ ոչ:

— Մի վրդովէք, օրիորդ, ես եկել եմ ձեզ
ազատելու:

— Ի՞նչ, ազատելու:

— Այս, ձեզ բոլորիդ:

— Նոյն իսկ կոմսին:

— Այս, նոյն իսկ կոմսին:

— Երկի ձեր մէջ խիղճը խօսեց:

— Էհ, օրիորդ, խղճի մասին խօսք անգամ չի
կարող լինել: Ձեզ համար սիմոյն չէ... ես ու-

զում եմ ձեզ ազատել, բայց միայն մի պայմանով:

—Ասացէք. դուք երեխ որոշ գումար էք ուղղում, ես պատրաստ եմ վճարելու ձեր ուղածը, ես շատ հարուստ եմ...

—Օրիորդ, կտրեց նրան զօրապետ Լաշչինսկին, փող չէ իմ ուղածը. դրամ ես միշտ զէն-ըովս էլ կարող եմ ճարել:

—Ապա ի՞նչ է ձեր ուղածը, հարցը օրիորդը զարմացած:

—Խօսքս ձեր մասին է, օրիորդ:

—Իմ մասին... պարզեցէք ձեր միտքը, սինեօր Լաշչինսկի:

—Խօսքս, այս, ձեր մասին է. ես առաջարկում եմ ձեզ պատիւս ու ազգանունս:

—Օրիորդը հազիւ կարողացաւ զսպել իր դայլոյթը:

—Բայց չէ որ ես փեսայ ունեմ:

—Որը այդպիսի ծանր վէրքից յետոյ հազիւթէ կենդանի մնայ, կտրեց նրան Լաշչինսկին. բացի այդ, նոյն իսկ եթէ մնայ էլ, ի՞նչ կայ որ, կարելի է հեռանալ ու բաժանել նրանից:

—Լաւ, ասաց օրիորդը, իսկապէս կարելի է կոմսը չը լաւանայ, իսկ մենք անպատճառ ազատւելու ենք. ես համաձայն եմ, սինեօր Լաշչինսկի, ես ընդունում եմ ձեր առաջարկը, սակայն երդեցէք, որ չէք խաբում ինձ:

—Երդւում եմ թէ խաչով և թէ կիսալուսնով: Կէս ժամից յետոյ, շարունակեց նա, մեր

նաւը կրակի մէջ կը լինի ու այն ժամանակ մենք կազատւենք: Այդ բոլորը ես առաջուց մըտածել ու հաշւել եմ: Ժամանակը շատ թանգէ, ուստի ես ստիպւած եմ հեռանալ:

Եւ նա ուրախ ուրախ դուրս եկաւ օրիորդի կայիւտից:

Օրիորդը մենակ մնալով խորասուզւեց իր մտքերի մէջ, երբ նաւի վրայ չորս կողմից սարսափելի իրարանցում սկսւեց:

—Հրդեհ, հրդեհ, գոռում էին տաճիկները խելազարի նման վազվելով այս ու այն կողմը:

—Շուտով մակոյկներ իջեցրէք, հրամայեց Մետիւրը. ահա հեռուն երեսում է մի փոքրիկ կղզի, ուղղւենք գէպի այն կողմը:

Էլ ոչոք գերիների մասին չէր մտածում, ամենքը ուղում էին ազատւել, ուստի իրար հըրելով, ջուրը գցելով աշխատում էին մակոյկում տեղ բռնել:

Լաշչինսկին գիմեց հիւանդների բաժանմունքը, որտեղից էլ-կադուրը ձեռների վրայ դուրս էր հանում վիրաւոր կոմսին:

—Դու աւելի լաւ կանես, եթէ օգնես տիրուհուդ, — ասաց նա արաբին, իսկ ես կը տանեմ կոմսին:

—Այդ ի՞նչ աղմուկ է, հարցը օրիորդը, երբ էլ-կադուրը ներս մտաւ նրա բաժանմունքը:

—Փախչենք, օրիորդ, կրակը արդէն բռնել և ամբողջ նաւը. մի քանի վայրկեանից յետոյ նոյնիսկ դուրս գալու ճանապարհ չի լինի:

— Իսկ կոմսը, սինեօր Պերպինիանօն, ծերունի Ստարկէն, հարցրեց օրիորդը:

— Ահա և նրանք, պատասխանեց Էլ'-Կադուրը, ցոյց տալով նրանց վրայ, երբ դուրս եկաւ օրիորդի հետ միասին տախտակամածը:

Նրանց մօտեցաւ զօրապետ Լաշչինսկին, վիրաւոր կոմսին գրկած:

— Նստեցէք, օրիորդ, ասաց նա, իսկ ես ձեր յետևից կը գամ. շտապեցէք, օրիորդ, թէ չէ մակոյի կարող է հեռանալ:

Հազիւհազ Էլ'-Կադուրը կարողացաւ տեղ ճարել մակոյկում դքսունու համար:

Զօրապետ Լաշչինսկին, օգտւելով այդտեղ տիրող շփոթից, յետ մնաց քրիստոնեաներից ու ազատւելով ամբոխից, վագեց նաւի միւս մասը, ուր կրակը սաստիկ էր, որտեղ ոչոք չը կար: Նա արագութեամբ քցեց վիրաւոր կոմս լէ-Գիւսերին կատաղած ալիքների մէջ:

— Վերջապէս կարողացայ ազատւել քեզանից, ուրախ բացականչեց նա. անկասկած, օրիորդը հիմա իմս կը լինի:

Յետոյ նա արագութեամբ իրեն ձգեց ծով, ու լողալով ուղղւեց դէպի մակոյիկը:

— Ազատեցէք ինձ, աղաչում եմ, խնդրեց նա:

— Մենք առանց քեզ էլ շատ ենք, պատասխանեց մի ինչ որ տաճիկ զինւոր:

— Ոչ, այստեղ մի ազատ տեղ կայ, ասաց միւսը, եկ շուտով, զօրապետ:

— Կեցցէք, տղայք. երբ հասնենք ափը, ես կը նւիրեմ ձեզ յիսուն ցեխին:

Նրանց մակոյիկը վերջինը հասաւ կղզի. արդէն բոլորը հաւաքւած էին:

— Իսկ ժրտեղ է կոմսը, գիմեցին նրան:

— Միթէ նա դեռ չէ հասել. իսկ ես կարծում էի, որ նա ձեզ նետ պիտի լինի: Զը լինիթէ նրան մի որևիցէ դժբախտութիւն պատահեց:

Օրիորդը, լսելով այդ խօսքերը, ուշաթափւած գետին ընկաւ:

Սինեօր Պերպինիանօն ու Էլ'-Կադուրը օդնութեան հասան նրան:

— Ի՞նչ արիր կոմսին,— ասա, անպիտան, մօտեցաւ նրան ծերունի Ստարկէն. չէ՞ որ Էլ'-Կադուրը տեսաւ ինչպէս դու նրան գրկած բերում էիր:

— Այո, այդպէս է... բայց... յետոյ բժիշկը գտաւ, որ ինքը աւելի լաւ կը տանի կոմսին... և ես հիւանդին յանձնեցի նրան. իսկ սյդ ժամանակ ինձ վրայ էլ յարձակւեցին չորս տաճիկ զինւորներ... ես ստիպւած էի պաշտպանւել... իսկ յետոյ երբ ես լող էի տալիս, պարզ լսեցի, ինչպէս բժիշկը ասում էր բարկացած՝ ոչ ոք իրաւունք չունի ձեռք տալու վիրաւորին... ել ես չը զիտեմ, թէ ինչով վերջացաւ...

Այդ ըոպէին մօտ եկաւ Մետիւբը:

— Ի՞նչ ենք անելու այժմ, հարցրեց նրան Լաշչինսկին:

— Ես իսկոյն մարդ եմ ուղարկելու, որ Հուսովից մեզ համար մի նաւ ուղարկեն. իսկ մինչև այդ մենք կըսպասենք այստեղ: Ուրիշ եկը չը կայ:

— Դու այդպէս էլ կարծիր, որ մենք հանգիստ կը սպասենք նաւի գալստեանը, վնթիլնթաց իր քթի տակ ծերունի Ստարկէն:

VII

Ա Զ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն:

Բէն-Ճայէլը ալիքների դէմ երկար մաքառելուց յետոյ, վերջապէս կարողացաւ ափ դուրս գալ: Բայց չը նայած իր յոգնածութեանը, նա կանգ չառաւ, այլ արագօրէն դիմեց Մուլէյ-էլ'-կադելի բանակը,

Մի քանի ժամից յետոյ նա կանգնած էր իր սիրելի պարոնի առաջ:

— Դու վատ լուրե՞ր ես բերել, հարցրեց նրան Մուլէյ-էլ'-կադելը:

— Այո, պարոն, պատասխանեց արաբը. քրիստոնեաները փախուստի փորձ կատարեցին, նրանց հետամուտ եղաւ Մետիւբը և բռնելով նորից գերի տարաւ:

— Իսկ ի՞նչ ես կարծում, Մետիւբը ուր տարած կը լինի նրանց:

— Ի հարկէ ամրոց, Գարաջիայի մօտ:

— Այժմ մենք նորից ենք պատահելու միմեանց, ասաց Մուլէյ-էլ'-կադելը բարկացած, բայց այս վերջին անգամը կը լինի:

— Թոյլ տուր նկատելու, որ այդ կնոջ հետ շատ գժւար է մրցել, ասաց Բէն-Ճայէլը:

— Բայց ոչ ինձ համար, ես շատ ուժեղ եմ և բոլոր բանակը սիրում է ինձ և ոչ ոք ձեռք չի բարձրացնի ինձ վրայ:

— Սակայն, նա կարող է այնպէս անել, որ Պոլսից քեզ մետաքսեայ պարան^{*)} ուղարկեն:

— Դու հանգիստ եղիր, իմ մտերիմ Բէն-Ճայէլ, նա այդ չի անի... այժմ դու գնա երեսուն ձիաւոր զինւոր հաւաքիր, ինձ համար նոյնպէս մի լաւ ձի պատրաստիր... մենք կը գնանք Հուսսիֆ ամրոցը ցամաքային ճանապարհով:

Արաբը դուրս գնաց վրանից՝ իր տիրոջ հրամանը կատարելու:

Մի քանի ժամից յետոյ Հուսսիֆ ամրոցի մօտ, պարսպի տակ, պատրաստ կանգնած էին մի խումբ լաւ զինւած քաջեր. երկու զինւոր նրանցից բաժանւելով, դիմում էին դէպի ամրոցի գլխաւոր մուտքը:

Դա Մուլէյ-էլ'-կադելն էր իր հաւատարիմ Բէն-Ճայէլի հետ միասին:

Կանգ առնելով դռան առաջ Մուլէյ-էլ'-կադելը բարձրածայն կանչեց.

^{*)} Հին ժամանակները երբ տաճկաց ոուլթանները գժգոհ էին լինում բարձրաստիճան մահմեղականներից, նրանց իբրև ընծայ՝ շքեղ տուփի մէջ մետաքսեայ պարան էին ուղարկում կախւելու համար:

— Ես Մուլէյ-էլ'-կաղեն եմ, յայտնեցէք ձեր
տիրուհուն, որ ուզում եմ նրան տեսնել:

— Մուլէյ-էլ'-կաղել, Մուլէյ-էլ'-կաղել, լըս-
ում էր չորս կողմից, կեցցէ քաջ Մուլէյ-էլ'-
կաղելը, մեր զօրքերի պարծանքը:

Սպասաւորներից մէկը մօտենալով ասպե-
տին ու խոնարհ գլուխ տալով ասաց.

— Տիրուհիս քեզ սպասում է:

Մուլէյ-էլ'-կաղելը իջաւ ձիուց, մօտեցաւ
Բէն-Տայէլին և ականջին ինչ-որ խօսք ասաց.
Վերջինս գլխով համաձայնութեան նշան արաւ:

— Դէն, գնանք տիրուհուդ մօտ, դիմեց
սպասաւորին Մուլէյ-էլ'-կաղելը:

Նրանք մտան այն դահլիճը, որտեղ քիչ
առաջ Գարաջիան հիւրասիրել էր զօրապետ
Տեմպեստային:

— Այդ դժւ ես, Մուլէյ-էլ'-կաղել, դիմեց
նրան Ալի փաշայի թոռը: Ի՞նչը ստիպեց քեզ
դալ ամրոց...

— Իմ ցանկութիւնս է իմանալ, թէ ի՞նչ ե-
ղաւ քրիստոնեայ օրիորդը...

— Ահա թէ ինչ. դու եկել ես այդ անպի-
տան օրիորդի համար, որը խաբեց ու խայտա-
ռակեց ինձ. բայց դու գիտե՞ս արդեօք, թէ ինչ
է քեզ սպասում այդ քրիստոնեաներին պաշտ-
պանելուդ համար:

— Ես ոչնչից չեմ վախենում:

Դու կարծում ես թէ Մուստաֆան ու Սե-
լիմը այդ դէպքի վրայ ուշադրութիւն չեն
դարձնելու:

— Ես նրանցից էլ չեմ վախենում, զօրքը
ինձ սիրում է ու հաւատարիմ է:

— Այն ժամանակ դու կարող ես Մուլթանից
իբր նւէր ստանալ մետաքսեայ պարան:

— Պոլիսը հեռու է, և ճանապարհին կարող
է կորչել այն:

— Ուրեմն դու ինձ պատասխան չես ուզում
տալ, բարկացած հարցը եց Մուլէյ-էլ'-կաղելը:

— Ոչ. այդպիսի հարցերին ես պատասխան
չունեմ:

— Այն ժամանակ մնամ բարեւ, ասաց Մու-
լէյ-էլ'-կաղելը. ես իմ անելիքս կանեմ:

Եւ նա արագութեամբ դուրս եկաւ Գարա-
ջիայի պալատից:

Խումբը բակում արդէն սպասում էր նրան:

— Գնանք, իմ քաջ ընկերներ, ասաց Մուլէյ-
էլ'-կաղելը, ձին հեծնելով:

Ու խումբը դուրս եկաւ ամրոցից: Հազիւ
թէ նրանք մի կէս ժամւայ ճանապարհ անցած
լինէին, երբ քարափի միջից դուրս եկաւ կիսա-
մերկ մի մարդ:

Զինւորները իսկոյն մերկացը իրանց ու-
րերը:

— Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում, գոռացին նրանք:

— Այդ դժւ ես, Նիկոլա Ստրադիօմո, զարմա-
ցած հարցը եց նրան Բէն-Տայէլը. այդ որտեղից:

— Ի՞նչ մարդ է սա, հարցը եց Մուլէյ-էլ'-
կաղելը իր սպասաւորին:

— Սա օրիորդի խմբի յոյներիցն է, պատաս-
խանեց Բէն-Տայէլը:

— Բայց ի՞նչպէս ընկար այստեղ, հարցրեց Մուլէյ-էլ՝Կադելը եկորին:

— Թոյլ տուր նախքան քեզ պատասխանելը իմ կողմից էլ քեզ մի հարց տամ, ասաց յոյնը: Ուր ես գնում. արդեօք իմ տիրուհուն ավատելու:

— Այո, ես ուզում եմ Մետիւրի ճանապարհը կտրել:

Օրիորդը արդէն Մետիւրից միանգամայն ազատ է, բայց նա այժմ գտնուում է զօրապետ Լաշչինսկու ճիրաններում: Մենք թէպէտ փախանք, բայց...

— Ի՞նչ ես ասում, զարմացած բացականչեց տաճիկ ասպետը. գուցէ դու ստում ես.

— Ոչ, պարոն, ասաց Նիկոլա Ստրադիօտօն, ու մանրամասնօրէն պատմեց ամեն ինչ. այժմ— վերջացրեց նա— Մետիւրը այնպիսի դրութեան մէջ է, որ հնարաւորութիւն չունի իր գերիների ըմբռուտութիւնը զսպելու:

— Իսկ որտեղ է օրիորդը:

— Այստեղից ոչ-հեռու.

— Կոման Էլ նրա հետ է:

— Ոչ, պարոն, անպիտան Լաշչինսկին կոմսին քցեց ջուրը, ես այդ իմ աչքովը տեսայ. ես դեռ նրա վրէժը առնելու եմ:

— Ժամանակը շատ թանգ է, ասաց Մուլէյ-էլ՝Կադելը, շուտով առաջնորդիր մեղ օրիորդի մօտ:

— Հրացանների որոտը ընդհատեց նրանց խօսքը:

— Յառաջ, գոռաց Մուլէյ-էլ՝Կադելը. դրանք երկի Գարաջիայի զօրքերն են:

Ու ձիուն ուժգին մտրակելով, նա սլացաւ գէպի ընդհարման տեղը. նրան հետևեցին իրա հաւատարիմ զինւորները:

Հրացանի որոտների պատճառը քրիստոնեաներն էին, որոնք չը կամենալով այլս մնալ կըղզու վրայ, Մետիւրից թագուն ուզում էին փախչել: Իր կողմից ամեն տեսակ սջակցութիւն ցոյց տւեց զօրապետ Լաշչինսկին, և, կարելի է ասել, նա էր փախուստի ղեկավարը:

Ամեն բան պատրաստ էր արդէն և երբ փախստականները աննկատելի կերպով դուրս եկան բանակից, զօրապետ Լաշչինսկին, դաւաճանելով ընկերներին գոռաց.

— Ի զէն, ի զէն, քրիստոնեաները փախչում են:

— Անիրաւ դաւաճան, ասաց ծերունի Ստարկէն, մենք դեռ կը հանդիպենք միմեանց:

Փախստականները իսկոյն մի խումբ կազմեցին. առաջից գնում էր զօրապետ Տեմպեստան, նրա աջ կողմից՝ հաւատարիմ էլ՝Կադուրը, իսկ ձախից՝ սինեօք Պերպինիանօն: Նրանց հետևում էին յոյները, իսկ խմբի թիկունքը պաշտպանում էին մի յոյն նաւաստի ու ծերունի Ստարկէն:

Նրանք աջողութեամբ անցան կիրճը, և դուրս գալով մի մեծ դաշտ, հեռուն մի ինչ-որ գիւղ նկատեցին, որի բնակիչները, ինչպէս երկում էր, փախել էին, որովհետև գիւղի տները բարուքանդ վկատակներ էին ներկայացնում:

— Մենք պէտք է շուտով հասնենք այդ գիւղը, ասաց արաբը օրիորդին. այնտեղ մենք հնարաւորութիւն կունենանք պատրաստւելու ու աջող դիմադրութիւն ցոյց տալու:

Նրանց հետամուտ էր լինում Մետիւրի խումբը զօրապետ Լաշչինսկու առաջնորդութեամբ:

Նրանք արդէն շատ մօտ էին. քամու հետ լաւում էր և նրանց ձիերի սմբակների տրոփիւնը:

Վերջապէս փախստականները հասան մի ինչ-որ դատարկ տուն: Նա այնքան մեծ էր, որ ամբողջ խումբը ազատ կարողացաւ տեղաւորել:

— Մենք նրանց այնպիսի դիմադրութիւն կը ցոյց տանք, որ իրանց կեանքումը չեն մոռանայ, ասաց միշտ զւարթ ծերունի Ստարկէն:

— Դէն, իմ սիրելի բարեկամներ, պատրաստւենք պաշտպանութեան, դիմեց խմբին սինեօր Պերպինիանօն: — Դուք, օրիորդ, կանգնեցէք ծերունի Ստարկէնի, Սիմէօնի և էլ-կաղուրի հետ այս լուսամուտի մօտ, իսկ ես մնացեալների հետ կը պաշտպանեմ երկրորդը:

Այսպէս՝ խումբը երկու մասի բաժանւեց:

Տաճիկները արդէն ներս էին խուժել գիւղը. նրանք որոշել էին գրոհ տալով գերի առնել պաշարւածներին: Մետիւրը պատրաստ էր իւր բոլոր զինւորներին կորցնել, քան թէ ձեռքից թողնել օրիորդին:

Ի՞նչ պատասխան էր տալունա Գարաջիային, եթէ օրիորդին գերի չը վերցնէր: Եւ նա հրամայեց գրոհ տալ,

Դուռը, չը դիմանալով տաճիկների հարւածներին, ջախջախւեց ու վայր ընկաւ:

Բոլորը շտապեցին անցը պաշտպանելու:

Զօրապետ Լաշչինսկին, օգտւելով այդ հանգամանքից, արագութեամբ ներս թռաւ ազատ պատուհանից ու մօտենալով օրիորդին, ասաց.

— Դքսուհի, ես եկել եմ ձեզ յիշեցնելու ձեր տւած խօսքը:

— Լաշչինսկի, բացականչեց օրիորդը, սուրը բարձրացնելով, ես նրա համար ձեզ խօսք տւի, որ կարողանամ ընկերներիս ազատել:

— Այդ ինձ համար բոլորովին միմնոյն է, դուք ուղես-չուզես՝ իմն ես:

Զօրապետ Տեմպեստայի ու Լաշչինսկու միջև մի ուժեղ մենամարտ սկսւեց:

Մի երկու ըոպէից յետոյ դաւաճանը ստացաւ իր արդար պատիժը.

Նա ընկաւ մեռած:

Օրիորդը մի վայրկեան կանգ առաւ, իսկ Մետիւրը, օգտւելով այդ հանգամանքից, սուրը ձեռին յարձակւեց նրա վրայ:

Օրիորդի համար մահը անխուսափելի էր, և նա հրաշը միայն փրկւեց:

Էլ-կաղուրը, որ հետեւում էր օրիորդի ամեն մի քայլին, նկատելով Մետիւրի մտադրութիւնը, բոլոր ուժով իր սուրը իջեցրեց վերջնիս գլխին, որից նա վիրաւորւած վայր ընկաւ: Իսկ վեհանքին, որից նա վիրաւորւած վայր ընկաւ: Պերպինիանօն վտանգի մէջ է, հասաւ նրան օգնութեան:

Մետիւրը հաւաքեց իր վերջին ոյժերը, հանեց կողքից կախած ատրճանակը ու...

— Զգնյշ, օրինրդ, գոռաց էլ՝ Կադուրը, և առաջ գալով, իր կրծքովը պաշտպանեց օրիորդին:

Գնդակը դիպաւ էլ՝ Կադուրին և այդ ազնիւ ու հաւատարիմ ծառան վիրաւորւած ընկաւ իր սիրելի օրիորդի ոտների տակ:

— Իմ սիրելի՛, իմ խեղճ էլ՝ Կադուր, ասաց օրիորդը, չը կարողանալով զսպել հոսող արտատասուքը:

— Ես մեռնում եմ... տիրուհի... մնաս բարեաւ... երջանիկ եղիր...

— Ոչ, իմ սիրելի՝ էլ՝ Կադուր, դու չես մեռնի, դու ապրելու ևս դեռ, ես բժշկել կը տամ քեզ...

— Ոչ... օրինրդ... ես... մեռնում եմ... իմ տանջանքներս վերջացան... խնդրում եմ... համբուրիր ինձ... վերջին... անդամ...

Բոլոր շրջապատողները երեխայի պէս լաց էին լինում: Այլևս չը կար նա, որի ամբողջ կեանքը լի էր միմիայն մի զգացմունքով ու մի նպատակով—հաւատարմութեամբ ու անձնազոհութեամբ ծառայել իր տիրուհուն:

Կանգնած տաճիկների շարքերում ինչ-որ խլրտում ընկաւ. Մետիւրի զինւորները, թողնելով իրանց զէնքերը փախուստի դիմեցին:

Դրա պատճառը Մուլէյ-էլ՝ Կադելի երեալն էր: Նրան աջողութեամբ հասցըել էր այդտեղ նիկոլա Մտրադիօտօն:

Վ Ե Ր Ձ

Անցաւ վեց ամիս: Օրիորդը միանգամայն կազդուրւեց այն բոլոր պատահարներից, որ այդ միջոցին անցան նրա գլխով:

Սյս դէպքը մեզ համոզեց, որ կինը ոչ մի պարագայում և ոչ մի բանում յետ չի մնում տղամարդուց: Միայն հարկաւոր է գօրացնել մարմինն ու հոգին:

Նա կազմեց օրիորդներից մի փոքրիկ խըմբակ, որը պարապում էր զանազան ֆիզիքական վարժութիւններով:

Զօրապետ Տեմպեստայի օրինակին հետևելով, կանայք երկար տարիներ պարապում էին իրանց մարմինն ու հոգին զարգացնելով. Նրանք սովորում էին լողալ, ձի նստել, որս անել, և պարապում էին այլ նմանօրինակ խելացի զբաղմունքներով: Մէր դէպի այդպիսի պարապմունքները հաստատւեց զօրապետ Տեմպեստայի հայրենիքում: Եւ ժամանակակից վեհ ու վերածընւած իտալիան շատ է պարտական իր քաջ և գործունեայ իտալուհուն:

Մուլէյ-էլ՝ Կադելի, այդ եռանդուն օրիորդի ազդեցութեան տակ, խօսք տւեց չը տարբերել քրիստոնեաներին մահմեդականներից:

Արդեօք երկարատև՝ էր լինելու օրիորդի ազդեցութիւնը—այդ միայն Ալլահը գիտէ...

Կեցցէ օրիորդ Տեմպեստան...

թիւն, դաստիարակութիւն տալ. դրա համար նը-
րան ուղարկեց Բոստօն՝ անւանի գիշերօթիկ դըպ-
րոցը:

Հենրիետը այդտեղ աւարտեց դասընթացքը
և անցաւ Եւրոպա. հաւանօրէն այստեղ կը մնար
էլի մի քանի տարի, եթէ չ'ստանար հօր մահւան
լուրը: Նա դարձաւ տուն, ընդունեց հօր ժառան-
գութիւնը և կարգի բերեց իրենց տնտեսութիւնը,
որ հօր հիւանդութեան միջոցին քայըսյման մէջ
էր: Տան գործերով զբաղւած նա ժամանակ
չունէր իր մանկական խաղերի ընկերուհուն մը-
տաբերելու:

Տնային գործերը կարգի բերելուց յետոյ,
մի անգամ Հենրիետը հրաւէր ստացաւ տեղային
բարեգործական ընկերութեան վարչութիւնից՝
մասնակցելու նրա կազմակերպելիք արտասովոր
հանդիսին, որից ստացւած օգուտը յատկացւե-
լու էր մանկական ապաստարանի շինութեան:

Հանդիսի ծրագիրը աչքի անցկացնելիս, գե-
րակատարների շարքում նա տեսաւ իր ընկերու-
հու, Մարիկիտ Դելլա-Ցիեզի անունը:

Ուրախացած Հենրիետը նոյն օրը գնաց գլու-
նելու իր վաղեմի ընկերուհուն: Սակայն Մարի-
կիտին դժունելը այնքան էլ հեշտ չէր:

Մարիկիտի հայրը տնտեսապէս քայքայւել
էր, տարւել էր թղթախաղի մէջ իր վերջին մի
կտոր հողը և ի լուսն այդ ամենի՝ ինքնասպա-
նութիւն էր գործել, թողնելով միակ աղջկանը
կատարեալ որք՝ ենթակայ բախտի քմահաճոյքին:

Սրտացաւ հարկանները Մարիկիտին տւել
էին կաթոլիկների վանքը. սակայն ինքնասէր աղ-
ջիկը չէր կարողացել տանել վանական կարգերը
և իր անհնագանդութեան պատճառով հեռացւել
էր այստեղից:

Այդ օրւանից նա թափառական կեանք էր
վարել, շատ անգամ ապրել էր մօր հեռաւոր աղ-
գականների մօտ, որոնք աղքատ էին և տեղային
բարեկիրթ հասարակութեան մէջ հեղինակութիւն
չունէին:

Այդ ժամանակաշրջանում Մարիկիտն ինչ
ասես որ չէր կատարել եղել էր մանրավաճառ,
վարժուհի, ծառայել էր հեռախօսում և այլն և
այլն, բայց ոչ մի տեղ չէր կարողացել երկար
մնալ:

Այդ ամենի պատճառը մասամբ նրա գեղեց-
կութիւնն էր, որ նրան տհաճութիւններ էր պատ-
ճառում, բայց գլխաւոր պատճառը Մարիկիտի
ընաւորութիւնն էր. նա կրքոտ էր, անսանձ,
իշխող, պահանջկոտ և ամեն մի արգելք արհա-
մարհող:

Ահա այս էին այն բոլոր տեղեկութիւնները,
որ ստացաւ Հենրիետը իր նախկին ընկերուհու
մասին:

Նա իմացաւ և այն, թէ մօտ ժամանակներս
Մարիկիտը ստացել է հեռաւոր աղգականից մի
փոքր ժառանգութիւն և մօտակայ փոքրիկ բա-
ղաբում խանութ բացել և ծաղկի առևտուր
ոկտել: Այդ գործը կարող էր յաջող առաջ գնալ,

բայց... բայց Մարիկիտը նշանւել է. տեղային փաստաբանի, Ռոմուայլդի հետ, ջերմ սիրում է նշանածին, և դրա համար էլ չի հետեւում իր գործին:

Խեղճ Մարիկիտ, —մրմնջաց Հենրիետը՝ լսելով այդ նորութիւնները ընկերուհու կեանքի մասին: —Բայց սպասիր, այժմ ես կանցնեմ գործի և յոյս ունեմ, որ ինձ կը յաջողւի մի լաւ բան անել քեզ և քո նշանածի համար, եթէ իհարկէ Ռոմուայլը արժանի է վատահութեան:

Տօնի նախընթաց օրը Հենրիետը գտաւ Մարիկիտին, բայց երկար խօսել չկարողացան. Մարիկիտը ամբողջովին զբաղւած էր տօնի պատրաստութեամբ. նա խաղալու էր պատասխանառու մի դեր, այն է՝ հանդէս էր գալու որպէս Մեծ Օձի քրունի և գլխաւոր կաքաւողը հնդկական կրօնական բեմախաղերի-միստերիաների մէջ:

—Այս, Հենրիետ, —բացականչեց Մարիկիտը, սեղմելով ընկերուհու ձեռքը և նայելով նրան իր սիրուն փայլուն աչքերով, —եթէ իմանայիր, որքան ցաւ ու վիրաւորանք եմ կրել այսքան ժամանակ. փորձութեան դառն բաժակն եմ խմել:

—Այժմ ամեն ինչ կը փոխափ, Մարիկիտ: Ես խօսք եմ տալիս:

—Շնորհակալ եմ, քոյրիկս: Այժմ ինձ թւում է, որ առանց քո օգնութեան էլ վիճակս լաւանալու է: Տօնին սիրում է ինձ: Միայն...

—Միայն ի՞նչ:

—Նա դեռ այնքան երիտասարդ է... և թեթևամիտ: Նա չուժ է գրաւելում: Այստեղ ես շատ հակառակորդներ ունեմ, և Տօնին գեղեցիկ է... Մի քանի կանայք տեղային հասարակութիւնից չեն կարողանում տանել, որ ես Ռոմուայլի կինն եմ դառնալու, որի համար նրանք կարող էին հարուստ հարսնացու գտնել: Բայց ես իմ սիրած մարդուն ոչոքի չեմ տայ: Լաւ է մեռնել քան այդ տեսնել, Հինրիխտ: Թեզ կծանօթացնեմ իմ Տօնիի հետ, ինքդ կըտեսնես, թէ նա ինչ մարդ է: Բայց առայժմ ցտեսութիւն, ցտեսութիւն: մի բարկանար ինձ վրայ, որ չեմ կարողանում այսօր քեզ հետ անցկացնել: Ինքդ տեսնում ես, թէ որքան զրադած եմ այս անտեղի տօնով: Հա, տեսել ես «Մեծ Քրմուհու» իմ զգեստը. ոչ. այս ըոպէիս քեզ ցոյց տամ: բայց ոչ, աւելի լաւ է, եթէ ինձ բեմի վրայ տեսնես այդ շորենով:

Ընկերուհիները բաժանւեցին՝ չկարողանալով երկար խօսել, յիշել անցեալ կեանքը, մանկութեան այն օրերը, երբ սկսւեց նրանց մանկական անկեղծ բարեկամութիւնը:

Հանդէսը մեծ յաջողութիւն ունեցաւ: Առանձնապէս «Օսկէ օձի» միստիքական կաքաւումը, որ կատարեց Մարիկիտը քրմուհու ըզգեստով, մեծ տպաւորութիւն թողեց. նրան՝ մի քանի անգամ դուրս կանչեցին բուռն ծափահարութիւններով, շատ ծաղկեփնջեր նւիրեցին և ինչ որ լնծայ մատուցին:

Շորերը փոխելով Մարիկիտը դուրս եկաւ
հասարակութեան մէջ և գտաւ ընկերուհուն:

— Դէհ, ասա տեսնեմ, ես դժուր եկայ քեզ,
Հենրիէտ, — հարցրեց ընկերուհին:

— Սքանչելի էր, — պատասխանեց Հենրիէտը:
Շնորհաւորում եմ, մեծ յաջողութիւն ունեցար:

— Իսկ... իսկ Տօնի Ռոմուայլդը, իմ նշանածը քեզ դժուր եկաւ:

— Զէ՞ որ նրա հետ ինձ դեռ չես ծանօթացրել:

— Ամբողջ երեկոն նրա հետ ես եղել,

— Ի՞նչ ես խօսում, Մարիկիտ: Ես քո նըշանածին չեմ ճանաչում, նրա մասին գաղափար անգամ չունեմ:

— Դու... դու սուտ ես խօսում, — տաքացաւ Մարիկիտը:

Նրա աչքերը՝ փայլում էին չարութեամբ:

— Զգոյշ կաց, Հենրիէտ: Եթէ համարձակես...

— Դու... դու գժւել ես, — վեհօրէն պատասխանեց Հենրիէտը, որ այդքան անսպասելի վիրաւորանք կրեց: — Ես քեզ ասում եմ, որ գաղափար անգամ չունեմ քո նշանածի մասին, երբէք նրան չեմ տեսել:

— Խարում ես, խարում: Ումից ստացար այդ ծաղկեփունջը:

— Ճշմարիտն ասած, ես կարող էի ասել, թէ պարտաւոր չեմ քեզ հաշիւ տալու, բայց խղճում եմ քեզ, Մարիկիտ, և կասեմ. այդ ծա-

դիկները ինձ տւեց իմ հին ծանօթը, որին ես այստեղ, հանդիսում, պատահաբար հանդիպեցի: — Նրա անհնարինութիւնը, Հենրիէտ:

— Պօղոս Ռանսում:

— Օ՛, Աստուած իմ, — հեկեկաց Մարիկիտը. — Զէ՞ որ Պօղոս Ռանսումը և Տօնի Ռոմուայլդը միևնոյն մարդն է: Հօր կողմից նա կոչւում է Պօղոս Ռանսում, իսկ քեռու կողմից, որը նրան որոշ կարողութիւն է թողել իր ազգանունն ընդունելու պայմանով՝ Անտօն կամ Տօնի Ռոմուայլդը եւ ամբողջ երեկոն իրար հետ էիք մանգալիս, և նա տւեց այս ծաղկեփունջը քեզ, որ առել էր իր նշանածից, ինձնից: Դու կախարդել ես նրան, Հենրիէտ: Ո՛չ, ոչ. ես նրան կենդանի չեմ տայ քեզ: Նա իմն է: Մի՛ ծածկիր, որ նա քեզ սէր է խոստացել:

Հենրիէտը քիչ շփոթւեց:

Յիրաւի Հենրիէտի հին ծանօթը, որ միաժամանակ երկու անուն էր կրում, հանդիպելով նրան այդ չարաբախտ երեկոյին՝ մի քիչ տարւել էր նրանով, և նրա մի քանի արտայայտութիւնները պարի ժամանակ կարելի էր սիրոյ բացատրութիւն համարել:

Երիտասարդի՝ այդ բացատրութիւններին Հենրիէտը առանձին ուշադրութիւն չէր դարձրել, բայց այժմ չէր կարող չխոստավանել, որ Ռանսում-Ռոմուայլդի սիրաշահութիւնները դուր էին գալիս իրան, և որ հասարակ ծանօթութիւնը կառող էր մտերմականի փոխւել:

իսկ Մարիկիտը, որին աիրել էր կոյր խանդիքը, կորցրել էր ինքնազապութիւնը և ուղղակի գոռում էր չարութիւնից կապտած.

Դու, ստոր արարած, դու, նենդաւոր օձեն քեզ կ'սպանեմ:

Աղջկայ աղազակը իր վրայ հրաւիրեց ամենքի ուշադրութիւնը: Հասակաւոր կանանցից մի քանիսը միջամտեցին, և Մարիկիտին հեռացրին:

Ծանր վիրաւորւած՝ Հենրիկետը նոյնպէս թուղեց հանդէսը և իսկոյն դնաց իր կալւածքը:

Հետեւեալ օրը առաւօտեան Մարիկիտը ուղարկեց Հենրիկետին մի կծու նամակ՝ իր յանդիմանութիւններով, ակնարկներով ու սպառնալիքներով:

Նամակը վերջանում էր այսպէս. «Եթէ դու վախկոտ չես, եթէ ունես ինքնասիրութեան սի կաթիլ, կըգաս վերջնականապէս բացատրելու ինձ հետ: Կէս օրին սպասում եմ քեզ «վանքի հին աւագանի» ափին: Յիշիր, ես ատում եմ քեզ: Հետդ վերցրու որևէ է զէնք. ի հարկէ, եթէ չես մոռացել զէնք բանացնելը և չես վախում հանդիպել երես առ երես այն թշուառ աղջկան, որից ուզում ես խել նրա միակ հարստութիւնը՝ բախտը և պատիւը»:

Կատարեալ խելագարւել է, — ասաց ինքն իրեն զրգուած Հենրիկետը՝ վերջացնելով վաղեմի ընկերուհու նամակի ընթերցումը: Ի՞նչ է ուզում նա ինձանից. կարծես մենամարտի է հրաւիրում ինձ:

Բայց եթէ տեսակցութեան չ'գնամ անտառը, շարունակեց ինքն իրեն խօսել Հենրիկետը. այդ գիծը ընդունակ է ամեն բանի, նոյն իսկ սպանութեան: Եւ ես չեմ կարող դիմել ոստիկանութեան՝ պաշտպանւելու այդ... խելագարից և միենոյն ժամանակ անբախտից:

Երկար չըմտածեց Հենրիկետը: Նա իսկոյն մի երկտող գրութեամբ պատասխանեց և ճամբեց նոյն գրաբերի հետ:

«Լաւ, մենք կը հանդիպենք իրար հին աւազանի մօտ կէս օրին: Հենրիկետ Գէյ»:

Կէս օրից քիչ առաջ Հենրիկետն իր կառքով մենակ ուղերւեց անտառ: Համելով անտառ նա ձին կապեց ծառից, ինքը ոտքով դիմեց դէպի աւազանը, անտառի խորքը. Նա մեծ դըպի աւրութեամբ էր գնում մացառուտների միջով:

Չորս կողմը կատարեալ լուսութիւն էր տիրում. այդտեղ միայն տօն օրերն էր հասարակութիւն գալիս զբունելու. այդ օրը հասարակ օր էր և շնչառը արարած չէր երեւում:

Ծառերից մէկի վրայից մի գորշ թոշուն թռաւ. ծանր թափահարելով թերերը, նա անցաւ նձի ցեխոտ ջրերի վրայով, կարծես սուեր լինէր, մահւան ուրուական:

Հենրիկետը ակամայ ցնցւեց և նայեց չորս կողմը: Նրան թւաց, թէ մէկը գալիս է իրա յետեից:

— Ո՞վ է այդ, — հարցըրեց Հենրիկետը:
Փոքրիկ ճագարը՝ խրտնած մարդկային

Ճայնից՝ դուրս թռաւ թվի տակից և փախուստ տւալ:

Հենրիկաը ակամայ ծիծաղեց. բայց տարօրինակ և տիսուր հնչեց այդ ակամայ ծիծառո...

«Մարիկիտը խաբեց ինձ,—մտածեց Հենրիկտը, նայելով ժամացոյցին.—մէկից անց է քառորդ, իսկ նա չկայ ու չկայ:

«Գուցէ... գուցէ թաք է կացել, դարձն է
մտել մի ծառի ետևում, որ յանկարծակի հար-
ւած հասցնէ»:

«Ո՞չ, ոչ. այդ անկարելի է: Ես զրպարտում
եմ Մարիկիտին: Նա կըքոտ է, նա դիւրաբորբոք
է, բայց հոգով շատ բարի է: Հաւատացած.. եմ,
որ մենք կը հաշտւենք: Վերջապէս նա պէտք է
հասկանայ, որ ես դիտաւորութիւն չունեմ նրանից
խելու այդ երիտասարդին, դէպի որը ես բոլո-
րովին անտարբեր եմ:

«Թող ամուսնանան, բախտաւորութիւն վընտրեն, եթէ երկրիս վըրայ կայ բախտաւորութիւն։ Յամենայն դէպս ես հեմ խանգառի նորանն»։

Այդ վայրկեանին մի սուր ձայն հասաւ
չենթիետի ականջին.

— $\theta q \zeta u b g s \zeta p$, — $\mu w p q$ $l s n t m$ ζp $u w :$ — $\theta q -$
 $u b g \zeta p$:

—Աստուած իմ, աղաղակողը Մարիկիտն է, —
բացականչեց Հենրիկետը: —Երկի մի անբախտու-
թիւն է պատահել նրան:

—Օգնութեան հասէք, աղատեցէք, —նորից
լուեց աղաչող ձայնը:

Մոռացած սեփական կեանքի վտանգը՝ Հենրիկալը կածանով առաջ վազեց դէպի ճահճուտ և տեսաւ ընկերուհուն մինչև գօտին ճահճի մէջ խրւած:

Տեսնելով Հենրիկետին՝ Մարիկիալը ձեռքե-
րով փակեց աչքերը և հեկեկաց ասելով.

— Կորչում եմ, Հենրիկ:

Այս հարցին՝ թէ Մարիկիտը ինչպէս է ջուրն ընկել և ինչու չի կարողանում դուրս գալ՝ նա պատասխանեց, թէ աւագուտ ճահճուտը, ուր նա կանգնած էր, պոկ է եկել և նրան իր հետ վայր գլորել. քանի գնում՝ նա աւելի և աւելի սուզւում է ջորի մէջ. խնդրեց ընկերուհուն մօտ չգնալ, եթէ ոչ նա էլ նոյն վիճակին կենթարկեր:

Հենրիկտը՝ երկիւղից մի վայրկեան քարացած մալուց յետոյ՝ ուշըի եկաւ և ոյժ գործ դրեց ընկերուհուն ազատելու։ Մինչ այդ ջուրը հասել էու մինչև Մարիկիտի կուրծքը։

Հենրիետը արագ արձակեց զօտին, դօտուց
կապեց շալը, շալից՝ գլխի փաթաթանը և այդ-
պիսով հիւսեց բաւական երկար պարան, որի մի-
ծայրը պահեց ձեռքում, միւս ծայրը ձգեց դէ-
պի ընկերուհին։ Ապա ձախ ձեռքով փաթաթւեց
ծառից, աջ ձեռքով սկսեց ընկերուհուն ջրից
դուրս քաշել։

—Ամուր բռնիր. բռնիր պարանը երկու ձեռքով, կանչում էր նա խեղւողին: —Մի վախիր. ես բաւական ուժեղ եմ, պարսնն էլ ամուր է. եթէ դու չըթուլանաս, բեզ շուտով ցամաք կըհանեմ:

Մեծ դժւարութեամբ, հայ շունչ առնելով, հա քաշելով վերջապէս Հենրիետին յաջողւեց ջրից դուրս հանել ընկերուհուն, որն ուշաթափէ եղել արդէն:

Այդ պահին վրայ հասաւ մի այլ վտանգ: Որտեղից որտեղ ջրի տակից դուրս եկաւ մի կոկորդիլոս և յարձակւեց աղջիկների վրայ. նա մի թռիչքով ցատկեց ափ: Հենրիետը իրեն չկորցրեց և հովանոցը ձգեց կենդանու բերանը: Այդ բանը հնարաւորութիւն տւեց Հենրիետին կենդանուն զբաղեցնել, նրա յարձակումը յետաձգել. մինչ այդ նա Մարիկիտին երկու քայլ ևս հեռացրեց ափից և շուռ գալով դաշոյնը խրեց կոկորդիլոսի աչքը:

Կենդանին հարւածի ուժից վեր բարձրացաւ և ընկաւ ջուրը, իր հետ տանելով նաև դաշոյնը:

Հենրիետն արագ գրկեց գեռ ուշագնաց ընկերուհուն և մի կերպ հասցըց կառը:

Տուն համնելուն պէս Հենրիետը իսկոյն կանչեց իր տանու բժշկին, որի օգնութեամբ ուշքի եկաւ Մարիկիտը. բայց բաւական թոյլ էր: Յետոյ սաստիկ ջերմեց, որից յետոյ հիւանդութիւնը բարկացաւ, և նա մտաւ անկողին:

Հենրիետը մօտ երկու ամիս չըհեռացաւ Մարիկիտի անկողնու մօտից. մայրական խնամք ու հոգատարութիւն էր տանում նրա վրայ: Երբ հիւանդութիւնն արդէն անցել էր, մի անդամ Մարիկիտն ասաց նրան.

— Լսիր, Հենրիետ, դու երեք անդամ ազատեցիր ինձ:

— Ի՞նչ անմիտ բան ես ասում:

— Ո՛չ, ո՛չ, դու դուրս քաշեցիր ինձ աւազութահճից. Խլեցիր ինձ կոկորդիլոսի ճիրաններից և վերջապէս ազատեցիր հիւանդութիւնից: Մի առարկիր. բժիշկն ասում է, որ իմ կեանքով պարտական եմ քո անձնւէր հոգատարութեան:

— Բայց գիտե՞ս, որ աւազանի ափին ես սպասում էի քեզ, դարան էի մտել որ... որ սպանեմ քեզ:

Հենրիետը ուրախ ժպիտը շըթունքներին, ձեռքը դեղ նրա բերանին:

— Հարկաւոր չէ, մի ասա այդ, — ասաց նա քնքաբար: Դու հիւանդ էիր, ահա բոլորը: Չիմա, յոյս ունեմ, կազատւես հիւանդութիւնից:

— Բոլոր հիւանդութիւնից, Հենրիետ, — շեշտեց Մանրիկիտը, ապա աւելացրեց.

— Տար ինձ քեզ հետ, Հենրիետ: Զեմ ուզում մնալ այստեղ, ուր ամեն ինչ յիշեցնում է անցեալը. հեռացրու ինձ այստեղից:

— Իսկ նշանածդդ. քո անուշ երազներն ու անուրջները բախտաւորութեան մասին:

— Ոչինչ չեմ ուզում լսել այդ մարդու մասին, որ գոնէ մի անդամ չեկաւ այցելելու ինձ, իմանալու իմ առողջութեան մասին: Ոչ, Հենրիետ. նրա հետ ամեն ինչ վերջացած է:


— Լաւ, պատասխանեց Հենրիետը: — Մօտ օրերս ես գնում եմ եւրոպա և եթէ դու կըկամենաս....

—Թէկուզ աշխարհի միւս ծայրը, — կրքոտ
պատասխանեց Մարիկիտը:

Երկու շաբաթ անց ընկերուհիները թողին
Ֆլորիդան՝ այլևս այնտեղ չըվերադառնալու նպա-
տակով:

Նրանք սկսեցին նոր կեանք: Մարիկիտը իր
ընկերուհու դրդմամբ սկսեց պատրաստել հա-
մալսարան մտնելու: Հենրիկետը խոստացաւ նրան
անհրաժեշտ միջոցները հայթայթել. իսկ ինքը
սկսեց բժշկութիւնն ուսումնասիրել նոյն համալ-
սարանում:

Այժմ նրանք երկուսն էլ Սորբոնի համալ-
սարանում սովորում են և մեծ յարգանք են
վայելում ուսուցչապետների կողմից:



Հ Ե Ր Ո Ւ

(Նեվիլից)

Աւազակներից մէկի հրացանը
ձեռքից յանկարծ վայր ընկաւ, և
նա ծունկ չոքեց:

Հայր Մարտենը, Լանդրայում փոքը աւանի-
եկեղեցու վանահայրը, թեթև նախաճաշեց ե-
դուրս եկաւ պարտէզ:

Նա միջահասակ ծերունի էր: Իր բազմա-
թիւ հօտի ցաւերն ու հոգսերը խոր կնճիռներ-
էին գծել նրա բարի, յոգնած աչքերի շուրջը:
Վերջին ժամանակներս աւելի ծանր օրեր էր
ապրում հայր Մարտենը:

Այբողջ հարաւարենելեան լուիզիան գողում
էր աւազակների սարսափից: Աւազակային խմբի
առաջնորդը մի յանդուզն յելուզակ էր, որին
իրաւամբ «Վայրենի» անունն էին տալիս, որով-
հետև նա ոչ օրէնք էր ճանաշում, ոչ ճշմար-
տութիւն և ոչ խիղճ:

Ագարակատէրերը աւազակների դէմ պաշտ-
պանւելու համար կազմել էին «Փրկութեան
մասնաժողով» անունով մի խումբ, որը բաւա-

կան յաջող գործում էր և պաշտպանում ամբողջ շրջանը:

Մինչ հայր Մարտենը՝ ընկած խոր մտածմունքի մէջ՝ նստած էր պարտէզում, պարտիզի դուռը բացւեց և ներս մտաւ դեռատի, վայել-ջակազմ մի աղջիկ: Երկար արտասւելուց աղջկայ գեղեցիկ դէմքը ուռել էր. արտասուքը հոսում էր արևառ այտերից: Նա մօտեցաւ քահանային և չոքեց նրա առաջ:

—Ազատեցէք նրան, տէր հայր, ազատեցէք, աղաչում էր աղջիկը շփոթւած ու սարսափած:

Հայր Մարտենը ծանր հոգոց հանեց և՝ ձեռքը դնելով՝ աղջկայ գլխին՝ սիրալիր հարց տուեց:

—Ի՞նչ է քո անունը:

—Մարիամ:

—Դու իմ ծխականներից ես:

—Այո:

—Դէհ, պատմիր տեսնեմ, ինչ է քո ցաւը:

—Այսօր առաւօտեան աւազակները փախցրին իմ նշանածին, Պիեռ-Կամօին: Մտածեցէք, տէր հայր, չէ որ այսօր մեր հարսանիքն էր լինելու: Երկու տարի շարունակ փող էինք հաւաքում, որ պսակւէինք և հեռանայինք այս դաժան երկրից և ահա...

Մարիամն այլևս չէր կարողանում խօսել. հեծկլտոցը խեղում էր նրան:

Խորը խոցւեց հայր Մարտենի սիրտը:

—Քո նշանածը «Փրկութեան մասնաժողով»

վիճ անդամ էր, հարցրեց նա անմիտիթար հեկեր, կող աղջկան:

—Այս, տէր հայր: Զէ որ աղնիւ մարդը չի կարող ձեռքերը ծալած նստել, երբ կողովանունը և սպանում էն իր մերձաւորներին: Պիեռին գերի բռնեցին, երբ նա օգնում էր հարևաններին պաշտպանւելու աւազակներից, հպարտութեամբ ասաց աղջիկը, վայրկենաչափ մոռացած իր ցաւը:

—Գուցէ վայրենին կը խնայէ նրա կեանքը,

փորձեց յուսադրել աղջկան հայր Մարտենը:

—Ո՛չ, ո՛չ, բացականչեց աղջիկը: «Փրկութեան յանձնաժողովի» ղեկավարը հենց նորերս գերի է վերցրել աւազակներից մէկին և երդիւն է կախել նրան, նախօրօք քննութեան ենթարկելով: Հասկանալի է, որ Վայրենին էլ նոյն կերպ կը վարւի Պիեռի հետ, որ իր ընկերոջ վրէժը լուծէ:

—Այս, այս, համաձայնւեց քահանան. այդ դէպքում մենք ոչինչ չենք կարող անել. մնում է միայն յոյս դնել Աստուծոյ վրայ:

Աղջիկը վախեցած նայեց նրա լայն բաց արած, զարմանք արտայայտող աչքերին:

—Միթէ հայր Մարտենը, որի մասին ես այնքան շատ բան եմ լսել, այս դժւար ըոպէին մեզ օգնութեան չի հասնի: Եւ միթէ Աստուծ թոյլ կտայ, որ այդ տեսակ եղեռն կատարւի, ասաց աղջիկը և, քիչ լուելուց յետոյ, ցասկոտ աւելացրեց:

—Ձեզ համար հեշտ է այդպէս խօսել, ո-

բովիետև դուք ծերացել էք և մոռացել, թէ ինչ
է երիտասարդութիւնն ու բախտաւորութիւնը:

—Բաւական է, զաւակս, ընդհատեց նրան
քահանան:

—Դու ճիշտ ես ասում, ես պարտաւոր եմ
աշխատել վերադարձնել քո բախտաւորութիւնը:
Ներիք ծերունուս, որ հոգում է իր կեանքի վեր-
ջին օրերի մասին, որոնք նոյնքան գին ունին,
որքան չորացած մի տերեւ: Դու պատրաստել ես
ամեն ինչ ճանապարհ ընկնելու համար:

—Այս, տէր հայր:

—Շատ լաւ, այժմ գնա մօրդ մօտ և սպա-
սիր, հրամայեց հայր Մարտենը քիչ մտածելուց
յետոյ: Եթէ ինձ յաջողեի մի բան անել, քո նշա-
նածը գիշերը կը վերադառնայ քեզ մօտ և դուք
իսկոյն հեռացէք այնտեղ, ուր որոշել էիք գնալ:
Դանդաղել հարկաւոր չէ: և ոչ ոքի մի ասէք թէ
ես ուր գնացի, լսում ես, Մարիամ, ոչ մի խօսք:

Աղջիկը ուրախադէմ ոտքի ելաւ և սրտագին
շնորհակալութիւն յայտնեց քահանային:

Հայր Մարտենը ժպտաց և մի վերջին
հայեացք ձգեց իր պարտիզին, կարծես ընդմիշտ
բաժանւելիս լինէր մի հին, փորձւած բա-
րեկամից:

—Աղօթիք ծերունուս համար, զաւակս, ա-
սաց նա բաժանւելով Մարիամից. մենք բոլորս
հաւասար տարածութեան վրայ ենք գտնուում
Աստծուց: Ես լաւ եմ ճանաշում Պիեռին. հար-
կաւոր է ազատել նրան. նա լաւ մարդ է և թըշ-
ւառների ու անբախտների ճշմարիտ բարեկամը:

II

Արևը մայր էր մտնում, փրկ հայր Մարտե-
նը քաշեց ձիու սանձը և կանգ առաւ մեծ ա-
նանցանելի ճահճի ափին, որի կղզու վրայ պա-
րում էին աւազակները: Նա մնձամբ ճանաչում
էր աւազակների պետին. նրանց մէջ կավին կա-
թուկներ, և հայր Մարտենին շատ անգամ էին
հրաւիրել հողին յանձնելու: աւազակակամբի ան-
դամներից նրանց, որոնց մեղաւոր հոգիները պո-
խադրուում էին միւս աշխարհը, ուր ոչ տիկրութիւն
կայ: և ոչ հոգս:

Տեսնելով մօտեցող ճիաւորին՝ թիւերի տա-
կից դուրս եկաւ մէկը և ձայն առեց հայր Մար-
տենին:

Հայր Մարտենը պատասխանեց, թէ ուզում
է խօսել աւազակապետի հետ: Աւազակը նախ
կապեց տէր հօր աչքերը, ապա առաջնորդեց
նրան դէպի իրենց քնակավայրը:

«Տէր հայրը շատ անգամ էր կապած աչքե-
րով, կատարել այդ ճանապարհորդութիւնը և գի-
տէր, որ եթէ քիչ շեղւի կածանից, կը թաղւի ճահ-
ճուտի: մէջ. դրա համար նա հանգիստ շունչ
քաշեց միայն այն ժամանակ, երբ վերջապէս
լսեց աւազակապետի ձայնը.

—Բարհվ էք եկել, տէր հայր. ու քախեմ
Զեղ տեսնելու:

Հայր Մարտենը արձակեց աչքերից կապը և

իր առաջ կանգնած տեսաւ գեղեցկալէմ ու
մարմնեղ մի մարդ, որը այն տեսակ զինորի
տպաւորութիւն էր թողնում, որ ամեն ըսպէ
պատրաստ է կռւել ու մեռնել:

Վայրենին տարօրինակ մարդ էր: Նա հա-
կադրութիւնների մի խառնուածք էր ներկայա-
ցնում. սսպետօրէն սիրալիր էր գէպի իրեն
դուր եկած մարդիկը և անագորոյն՝ իր թշնա-
միների հետ:

Հայր Մարտենը ժամանակ չ'կորցրեց, իսկոյն
գործի անցաւ:

—Ես եկել եմ ձեզանից ողորմութիւն հայ-
ցելու: Այսօր առաւօտեան դուք գերի էք վեր-
ցրել Պիեռ Կամօին...

—Ես գնդակահարելու եմ նրան, երբ Մու-
տօնում կախեն իմ խմբի անդամին, սառն կեր-
պով ընդհատեց քահանային Վայրենին: Ես շատ
գոհ եմ, որ «Փրկութեան յանձնաժողովի» հար-
ւածին պատասխանում եմ նման հարւածով: Կա-
մօի համար ձեր խնդրելը զուր է:

—Ես չեմ խնդրում ներել նրան, վրաբե-
րեց քահանան. արձակեցէք միայն մի քանի
ժամով իր մօրը տեսնելու:

—Ո՞վ կերաշխաւորէ ինձ, թէ գերին կըվերա-
դառնայ, հարցրեց Վայրենին: Թէև Ձեզ հաւա-
տում եմ, տէր հայր, բայց Կամօին չեմ կարող
վստահիլ:

Ծերունի հոգեսոր հովիւը աւազակի այդ խօս-
քերին խրոխտ տոնով պատասխանեց.

—Ես ինքս կըմնամ ձեզ մօտ Կամօի փո-
խարէն. թող իմ կետնըը գրաւ լինի ձեզ:

Տիրեց երկար լոռութիւն: Աւազակը հիաց-
մունքով ու զարմանքով նայեց քահանային և
խոր մտածմունքի մէջ ընկաւ: Շուտով խորա-
մանկ միտքը փայլ տւեց դէմքին:

—Լաւ, համաձայն եմ, այս վայրկենից Կա-
մօն ազատ է, կարող է անել ինչ ուզում է, իսկ
դուք կըմնաք մեզ մօտ գերի: Միայն իմացէք,
դուք կըմնաք մեզ մօտ գերի: Միայն իմացէք,
եթէ վաղը ժամը տասին Կամօն չըվերա-
սու պահանայ, և իմ մարդուն կախեն, ես կըգնդակա-
դառնայ, համաձայնութիւն տալը՝ մտածեցէք, տէր հայր:
համաձայնութիւն տալը՝ մտածեցէք, տէր հայր:

—Ոչ թէ ես, այլ դուք պէտք է համաձայ-
նէք. չէ որ առաջարկութիւնը ես եմ արել,—
դիմեց աւազակին հայր Մարտենը: Շտապեցէք
արձակել Կամօին, առանց այն էլ ժամանակը
կարճ է:

III

Առաւօտեան ժամի արդէն տասն էր, երբ
հայր Մարտենը զարթնեց այն վրանում, որը
յատկացրել էին նրան քնելու: Հենց նոր էր վեր
կացել անկողնից, երբ ներս մտաւ Վայրենին:
Աւազակը ըստ երեսյթին յուզւած էր, և նրա
աշքերը վայլում էին անհանգստութեամբ:

—Ինչո՞ւ այդպէս վարւեցիք, յանդիմանող
շեշտով դիմեց նա քահանային:

Հայր Մարտենը տեսաւ, որ այլևս չարժէ
ծածկել ճշմարտութիւնը, ամեն ինչ պատմեց նը-
րան։

— իմ պարտականութիւնն էր ազատել Կամօին նըս նշանածի համար՝ թէկուզ կեանքիս գնով։ Միևնույն չէ, ես երկար հօ ժեմ ապրելու։

— Ուրեմն իմ գերին ոչ մի դէպքում չի վերադառնայ, հարցրեց աւազակը:

Հայր Մարտենը գլխի շարժումով դրական պատճառաբան տւեց:

Վայրենին հանեց ոսկէ ժամացոյցը, որ մի ժամանակ պատկանում էր Մուղոնի տանուտէրին, և կը ճառացը եց ատամները:

—ինչ որ էլ լինի, ես պէտք է իմ դառն
պարտքը կատարեմ, մըթմըթաց նա: Ես նախազ-
գացի, որ դուք եկաք կամօին իմ ճանկից աղա-
տելու և ինչ-որ պայմաններ ապսպրեցիք «Փըր-
կութեան յանձնաժողովին», սակայն յանձնաժո-
ղովը դանդաղում է: Մինչև ժամի տասը մնում
է միայն քսան ըոպէ: Գնանք:

Անտրտունջ ու կատարեալ հանգիստ սրտով
քահանան հետեւց աւազակին դէպի մօտակայ
բլուրը, ուր հաւաքւել էին բոլոր աւազակները:
Նրանցից մի քանիսը առանձին էին կանգնած՝
հրացանները ձեռքերին պատրաստ բռնած։ Հայր
Մարտենը գիտէր, թէ ի՞նչ էր պահանջւում իրենից.
Նա առաջ անցաւ և մէջքը դէմ տւեց մեկուսի
կանգնած չորացած ծառի բնին։

— Ես պատրաստ եմ, հանդարտօրէն ասաց

նա: — Նելուռմ եմ ձեր մեղքը, որի պատճառը ես
եմ: Կատարեցէք այն, ինչ ձեր պարտքն էք հա-
մարում:

—Կապեցէք ձեր աչքերը, հայր սուրբ, առաջարկեց վայրենին, որի դէմքից պարզ երևում էր, որ նա հոգեպէս տանջւում էր:

—Ոչ, զլումը բացասօրէն շարժեց հայր
Մարտենը։ Ամբողջ կեանքումս աշխատել եմ
աեսնել Աստծուն։ Միթէ այժմ, երբ հանդիպե-
լու եմ Նրան, պէտք է կապեմ աչքերս։

Վայրենին ժամացոյցը ձեռքին մի կողմ քաշ-
ւեց և հրամայեց աւազակներին նշան բռնել։
Քրտինքի խոշոր կաթիները նստել էին նրա ճա-
կատին։ Աւազակներից մէկի ձեռքից հրացանը
յանկարծ վայր ընկաւ, ինքն էլ «Աստւած իմ»
առառակեհանու ուետին փուլեց։

— Նշան դրէք, խոսկոտ ձայնով հրամայեց
Վալրենին:

Բայց աւազակները դանդաղում էին հրացանները բարձրացնել, իսկ միւսները, որ շրջապատել էին նրանց, սկսեցին արտնջալ և յուղել: Հայր Մարտենը հանգիստ սպասում էր վերջին ըռպէին: Վայրենին ձեռքը բարձրացրեց համար կի նշան տալու, այդ վայրկեանին անտառում գարկի նշան տալու, անգամ հրացան արձակեցին: Աւազակի մռայլ դէմքը բողավառեց բաղցը ժպիտով:

—Թողէք, մենք յաղթեցինք: Փառք Աստուծուցուցիչը, ազգատ էք, տէր հայր: Զէք կարող եղաւակայել, թէ ողբան տանչւեցի այս կէս ժամանակակիցների մասին:

ւայ մէջ, երբ մտածում էի, թէ «Փրկութեան յանձնաժողովի» ղեկավարը չի պատասխանի իմ առաջարկութեանը:

— Զեմ հասկանում ձեր ասածը, տարակուսանքով ասաց հայր Մարտենը:

— Այս ըոպէիս կը հասկանաք, ժպտաց Վայրենին: Զեր «Փրկութեան յանձնաժողովը» գերել է իմ աջ ձեռքը, իմ օգնականներից լաւագոյնին, մեր խմբի «Գայլ» անունը կը ող անդամին: «Գայլը» Կամօի պէս տասը մարդ արժէ. ես յուսահատւած էի և չգիտէի, թէ ինչպէս ազատեմ ընկերոջս: Բարեբախտաբար դուք ընկաք իմ ձեռքը, և իմ յոյսը արդարացաւ, թէ «Փրկութեան յանձնաժողովը» ամեն բան կանէ ձեզ ազատելու. Ես պայման էի դրել տեղեկութիւն տալ ինձ մինչև ժամի տասը երկու անդամ հրացան արձակելով, եթէ նրանք համաձայն կը լինին գերիները փոխել: Այժմ լսեցիք հրացանի ձայնը. այդ մեր նշանն էր: Դուք, տէք հայր, ազատ էք, որովհետեւ ես հաւատացած եմ, որ «Փրկութեան յանձնաժողովը», կը պահէ իր խօսքը և «Գայլը» շուտով այստեղ կը լինի:


— Փառք Աստուծոյ, երկու հոգի ազատած են, ասաց քահանան՝ ազատ շունչ քաշելով:

— Թոյլ տւէք մեր հիացմունքը արտայայտելու ձեր քաջութեան առթիւ: Նատ քիչ անձնաւորութիւնների առաջ եմ ես խոնարհել իմ գլուխը, ինչպէս այժմ ձեր առաջ, ասաց աւազկ ասպետը խոր գլուխ տալով քահանային,

որը բլուրից ցած էր իջնում դէպի իր համար պատրաստւած ձին:

«Ի՞նչ դրութիւն կըստեղծւէր, Աստուծած իմ, եթէ «Փրկութեան յանձնաժողովը» յամառէր պատասխան տալու», — մտածում էր աւազակապետը քահանայի հեռանալուց յետոյ: — «Իմ ստուգադրեաները կարող էին չը հնազանդւել և չը կրակել. դրանով վերջ կը տրւէր իմ գերիշխանութեանը»:

Իսկ հայր Մարտենը նոյն պահին շտապում էր դէպի իր հօտը, նրա հետ բաժանելու և ցաւ, և ուրախութիւն:



Գիշե կ 20 կրտ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0306986

8199

85
U-13